Azg
armenian daily
1 ՅՈՒՆԻՍ 2000 ՀԻՆԳՇԱԲԹԻ 100 (2068)

# Հերթական միջնորդությունը մերժվեց

ԵՐԵՎԱՆ, 31 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏՊԱՆ: Երեւանի Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանը մայիսի 31-ին մերժել է հոկտեմբերի 27-ի գործով նախաքննությունն իրականացնող ՀՀ զինդատախազության միջնորդությունը գործով մեղադրյալ, Աժ պատգամավոր Մուշեղ Մովսիսյանի կալանքը երկարացնելու մասին՝ անհիմն լինելու պատճառով: Այս մասին հայտնեց Մ. Մովսիսյանի դատապաշտպան Կրոմվել Գրիգորյանը:

Ահաբեկչական ակտին դրդելու մեջ մեղադրվող Մուշեղ Մովսիսյանը ձերբակալվել է 1999 թ. նոյեմբերի 5-ին, նրա նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց է ընտրվել եւ մեղադրանք է առաջադրվել նոյեմբերի 10-ին, իսկ մեկ ամսով կալանքը երկարացնելու մասին վերջին որոշմամբ կալանքի ժամկետը լրանում է հունիսի 5-ին:

Այս առթիվ հիշեցնենք, որ նախորդ օրը, զինդատախազությունը նույն դատարանից ետ էր վերցրել Հարություն Հարությունյանի կալանքը երկարաձգելու իր միջնորդությունը: Հայաստանի Ազգային հեռուստատեսության գործադիր տնօրենի տեղակալի կալանքի ժամկետը եւս լրանում է հունիսի 5-ին, հետեւաբար նա էլ կալանքից պետք է ազատվի այդ թվականից սկսյալ:

ՇՐՋԱՅԺ

# Նախագահ Քոչարյանն այցելեց Լոռի, որտեղից սկսվել է նրա քաղաքական կենսագրությունը

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ

Սա ՀՀ նախագահի հինգերորդ այցն էր իր վարչապետության շրջանից սկսած: Նախագահ Ռոբերտ Քոչարյանի յուրահատուկ վերաբերմունքը Լոռու, լոռեցիների եւ Լոռվա բնաշխարհի նկատմամբ թերեւս կապված է բացատրել նրանով, որ նա 1990 թ.-ին Գերագույն խորհրդի պատգամավոր է ընտրվել հենց Վանաձորի ընտրատարածքներից մեկում:

Նախագահին ուղեկցում էին արտադրական ենթակառուցվածքները համակարգող նախարար Դավիթ Զադոյանը, առողջապահության նախարար Արարատ Մկրտչյանը, «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն Վահան Տեր-Ղեւոնդյանը, նաեւ գերատեսչությունների բարձրաստիճան պաշտոնյաներ:

Այցը բավականաչափ հագեցած էր: Ստեփանավանի տարածաշրջանի Գյուլագարակ գյուղում նախագահը մասնակցեց ամբուլատորիայի բացմանը: Ամբողջ գյուղը հավաքվել էր նայելու նախագահին, մի մասը նրան դիտում էր տների պատուհաններից: Նախագահի ոտքերի տակ գառներ մորթեցին: Սակայն կարեւորն այն է, որ այս մարդիկ հավանաբար շատ հարցեր ունեին նախագահին. մի մասը դժգոհ է իր կյանքից, մյուս մասն աշխատանք չունի, շատերը փող չունեն... Սակայն բարեբախտաբար վերջերս գյուղագարակցիների մի մասը աշխատանք գտել է: Տարբեր կազմակերպությունների ֆինանսական աջակցությամբ վերանորոգվում է Ստեփանավանի 1800 մետր երկարությամբ թունելը: Վերանորոգման աշխատանքներն ավարտելուց հետո այս մարդիկ կրկին անգործ կմնան: Թունելի ծայրում լույս չի երեւում:

Նախագահը եւ ավտոշարասյունը Գյուլագարակից ճանապարհվեց մոտակա Ամրակից գյուղ՝ նոր կառուցվող դպրոցի շինարարության հիմնաքարը դնելու: Երկրաշարժից ավերվել էր հին դպրոցը եւ 10 տարուց ավելի դպրոցը տնակային պայմաններում է: Գյուղն ունի 170 ընտանիք, բնակիչների 90 տոկոսը, ինչպես գյուղացիներն են ընդունում, անգործ են: Այս գյուղը չափազանց աղքատ է, շատ ավելի աղքատ, քան Հայաստանի շատ գյուղեր: Բնակիչների մի մասի լույսերն անջատված են, գյուղում չկա երիտասարդություն, գնացել են՝ ով ուր կարողացել է: Ամրակիցի բնակիչ Սուրեն Մարգարյանը շատ էր ուզում նախագահին բողոքել: Տարիներ առաջ Չոբանյան Արամայիսը, որ ժամանակին Ստեփանավանում եղել է թերթի խմբագիր, կրթված մարդ, բանկ է բացել, գումարներ է վերցրել գյուղացիներից: 873 ընտանիք փող են դրել, մեկ միլիոնից ավելի դոլար: Նախկին խմբագրի կինը եւ տղան վերցրել են փողը ու աղջկան փեսայի հետ ուղարկել Հոլանդիա: «Հենց Հոլանդիա մտնելուց մեծ-մեծ խանութներ ունեն: Ում բողոքում ենք՝ ուշադրություն չեն դարձնում, խնդրում ենք նախագահին ասեք, ուզում ենք ավտոբուսով գանք Երեւան եւ պարզել, թե ո՞ւր են կորել մեր փողերը», բողոքում են գյուղացիները:

Ամրակիցն ո՞ւր, Հոլանդիան ո՞ւր...

Արա նախագահ Քոչարյանն այցելեց եւ մասնակցեց Ստեփանավանում շենքերից մեկի բացմանը, որը եւս 22 ընտանիքների աղետվեց կացարանով:

Տես էջ 2

ԱՐՏԱԳԱՂԹ

# Առաջիկա 5-10 տարիներին հոսքը դժվար թե կրճատվի

ԵՐԵՎԱՆ, 31 ՄԱՅԻՍ, ՍՆԱՐՔ: Հայաստանի արտագաղթի վիճակագրական տվյալները հիմք են տալիս ենթադրելու, որ մոտակա 5-10 տարիների ընթացքում արտահոսքը Հայաստանից դժվար թե կրճատվի: Այդ մասին հաղորդեց Հայաստանի կառավարությանն առընթեր միգրացիայի եւ փախստականների գործերի վարչության պետ Գագիկ Եգանյանը:

Նրա խոսքերով, նման եզրակացության համար հիմք է ծառայում այն հանգամանքը, որ չնայած հարաբերական կայունությանն այդ ոլորտում, 1997 թ.-ից, պատշաճական տվյալներով, երկիրն ամեն տարի լքում է 10-12 հազար բնակիչ, իսկ ոչ պատշաճական տվյալներով՝ 40-50 հազար:

Ընդհանուր առմամբ ծանր սոցիալ-տնտեսական դրության պատճառով 1992–1997 թթ.-ին միայն պատշաճական տվյալներով Հայաստանը լքել է 500–700 հազար մարդ, իսկ ամենամեծ չափերի արտագաղթն եղել է 1993–1994 թթ.-ին: Ամենաարտագաղթային տարին Հայաստանի համար ընդունված է համարել 1992 թ.-ը, երբ միայն պատշաճական տվյալներով Հայաստանը լքել է մոտ 220 հազար մարդ:

Եգանյանի խոսքերով, վերջին տարիներին նկատվել է արտահոսքի անբնական իջեցում՝ կապված որոշ սոցիալ-տնտեսական կայունացման հետ: 1995–1999 թթ.-ին Հայաստանից արտագաղթն ընդունել է հիմնականում երկրի տղամարդ բնակչության աշխատանքային արտագաղթի բնույթ՝ գլխավորապես Ռուսաստան:

ՀԱՄԱՌՈՏ

## Չեչնիայում զոհվել է Ռուսաստանի նախագահի ներկայացուցչի տեղակալը

ՄՈՍԿՎԱ, 31 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏՊԱՆ: Չեչնիայում զոհվել են Չեչնիայում ՌԴ նախագահի ներկայացուցչի տեղակալ Սերգեյ Զվերեւը եւ Նորսիդա Խաբուսեեւան, որը Մոսկվայի կողմից նշանակված էր Գրոզնու քաղաքապետի օգնականի պատշաճում: Չորեքշաբթի առավոտյան նրանց մեքենան պայթել է ականից, որը չեչեն գրոհայինների կողմից դրվել էր Գրոզնի-Ուռուս-Մարտան խճուղում: Մեքենայում են եղել նաեւ Գրոզնու վարչակազմի ղեկավար Սուբհան Մոխչաեւը, որը ծանր վերքերով տեղափոխվել է հիվանդանոց: Ինչպես նշում է BBC-ն, առաջին անգամ այս ռազմական կամպանիայի ընթացքում Չեչնիայում զինված ակցիայի օբյեկտ են դարձել ռուսական այդչափ բարձրաստիճան ներկայացուցիչներ: Այս միջադեպը վկայում է, որ չեչեն գրոհայինները կարող են խոովարար հանրապետությունում գործել գործնականորեն անպատիժ, նշում է BBC-ն:

## Եվրախորհրդի դիտորդները հունիսի սկզբին կժամանեն Չեչնիա

ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶ, 31 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏՊԱՆ: Հունիսի սկզբին Չեչնիա կժամանեն Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների երկու փորձագետներ, Վլադիկավկազում ԵԽ հովանու ներքո մարդու իրավունքներին նվիրված միջազգային սեմինարում հայտարարել է ՌԴ նախագահի Չեչնիայում մարդու եւ քաղաքացու իրավունքների եւ ազատությունների ապահովման գծով հատուկ ներկայացուցիչ Վլադիմիր Կալմանովը: Փորձագետների խնդիրն է հավաքել եւ Ստրասբուրգում գտնվող ԵԽ կենտրոնական հանձնել տեղեկատվություն Չեչնիայում մարդու իրավունքների խախտման փաստերի մասին: Անդրադառնալով միջազգային սեմինարի այսօրվա նիստի թեմային, Կալմանովն ընդգծել է, որ «Ռուսաստանի նախագահի դիրքորոշումը այդ հարցում մնում է անփոփոխ՝ մարդը, որը հանցագործություն է կատարել, պետք է բանտ նստի, անկախ նրանից գրոհային է նա, թե ռուսական բանակի սպա»:

## Գորբաչովի կուսակցությունը գրանցվեց

ՄՈՍԿՎԱ, 31 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏՊԱՆ: Նախկին Խորհրդային Միության վերջին նախագահ Միխայիլ Գորբաչովը պատշաճաթես գրանցել է իր հիմնած Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը: 69-ամյա նախկին նախագահը հայտարարել է, թե իր կուսակցությունը նեցուկ է կանգնելու ազատական սկզբունքներին:

## Երուսաղեմում պա՞տ է կառուցվելու

ԹԵԼ ԱՎԻՎ, 31 ՄԱՅԻՍ, ՍՆԱՐՔ: Իսրայելի անվտանգության ծառայության, ոստիկանության եւ բանակի ներկայացուցիչներն առաջարկում են պատ կառուցել՝ Երուսաղեմի արեւելյան շրջաններն արաբական բնակավայրերից անջատելու նպատակով, որոնց վրա կտարածվի լիակատար պաղեստինյան վերահսկողություն, իսկ ոչ հեռու ապագայում՝ նաեւ ինքնիշխանություն: Ամենայն հավանականությամբ, դա նման կլինի Բեռլինի պատին: Ինչպես հաղորդվում է, այդ առաջարկությունը պատշաճանում են Իսրայելի կառավարության նախարարների մեծ մասը եւ Երուսաղեմի քաղաքապետարանը:

## Յուրի Յարով. Ռուսաստանը հրթիռային հարվածներ չի հասցնի Վրաստանին

ԹԲԻԼԻՍԻ, 31 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏՊԱՆ: Ռուսաստանը երբեք հրթիռային հարված չի հասցնի Վրաստանին, քանի որ հարգում է նրա ինքնիշխանությունը: Այս մասին մայիսի 31-ին Թբիլիսիում հայտարարել է ԱՊՀ գործադիր քարտուղար Յուրի Յարովը՝ մեկնաբանելով ռուս պատշաճանների վերջին հայտարարությունները Աֆղանստանում թալիբներին հրթիռային հարված հասցնելու հնարավորության մասին: Մի շարք վրացի քաղաքական գործիչներ կարծիք են հայտնել, թե ռուսական զորքերը կարող են հրթիռային հարված հասցնել նաեւ Վրաստանի տարածքին, որտեղ, ռուսական տվյալներով, կենտրոնացված են աֆղանական թալիբներ՝ պատրաստ անցնելու Չեչնիա: «Վրաստանին հարվածներ հասցնելու առանձին փաստեր կարող են տեղ գտնել միայն անջատականների եւ ահաբեկիչների կողմից, եւ ռուսական իշխանություններն ամեն կերպ կանխարգելելու են նման բաները», նշել է Յարովը:

ՃԵՊԱԶՐՈՒՅՑ

## «Բանակը հասարակության վրա ազդելու լծակներ չպիտի ունենա»

*Սերժ Սարգսյանի գնահատականը պաշտպանության նախարարի կարգալիճակում*

«Ի՞նչ լծակներ, ես խորապես համոզված եմ, որ բանակի ազդեցությունը հասարակության վրա պետք է էլանա, բանակը լծակներ չպետք է ունենա», երեկ կառավարության եւ խորհրդարանի հանդիպումից հետո հայտարարեց պատշաճանության նախարար Սերժ Սարգսյանը՝ ի պատասխան լրագրողների այն հարցի, թե սանձնելով պատշաճանության նախարարի պորտֆելը եւ պահպանելով Անվտանգության խորհրդի քարտուղարի պատշաճանը, նա ինչ նոր լծակներ է ձեռք բերել քաղաքական իշխանության ուղղորդման գործում: Սերժ Սարգսյանը հրաժարվեց գնահատել բանակային կառույցներում կատարվող կադրային փոփոխությունները՝ պնդելով, թե այդ ամենը կատարվում է հանրապետության նախագահի հրամանագրերով, որոնք գաղտնի փաստաթղթեր չեն, եւ նոր կադրային փոփոխությունների մասին էլ հասարակությունը կծանոթանա դրանց կատարվելուն պես: Հանրապետության նախագահը գործում է սահմանադրական լիազորությունների իր շրջանակում:



Անդրանիկ Մարգարյան վարչապետի հետ, որը ժամանակին պահանջում էր իր հրաժարականը նախագահի աշխատակազմի ղեկավարի եւ Անվտանգության խորհրդի քարտուղարի պատշաճանների, Սերժ Սարգսյանն այսօր պատրաստ է կառուցողական աշխատել եւ ոչ մի խոչընդոտ չի տեսնում, իսկ այն հարցին, թե ինչպես է վերաբերվում հատկապես ՀԺԿ գնահատականին, թե Ռոբերտ Քոչարյանի կողմից իր նշանակումը պատշաճանության նախարարության ղեկավար բարոյական քայլ չէր, նա պատասխանեց. «Եկեք անձերին չանդրադառնանք եւ չանհատականացնենք: Ես իրապես համոզված եմ, որ բարոյական գործերի մասին իրավունք ունեն խոսելու միայն բարոյական բարձր չափանիշներ ունեցող մարդիկ: Իսկ այն մասին, թե ես բարոյական իրավունք ունե՞մ ղեկավարելու բանակը, թող ասեն բանակը, հրամանատարները, այն մարդիկ, ովքեր անցել են պատերազմը, եւ ընդհանրապես ժողովուրդը»:

Ն. Դ.

# ՈՒՇԱԳԻԿ

ՇՐՋԱՅՑ

## Նախագահ Քոչարյանն այցելեց Լոռի, որտեղից սկսվել է նրա քաղաքական կենսագրությունը

Սկիզբը էջ 1

Սակայն Ստեփանավանում եւս 1300 ընտանիք կարիք ունի բնակարանի: Ստեփանավանցիներն ասում են, որ մինչեւ Քոչինյանի մարզպետ նշանակվելն այստեղ գործ չի արվել: Նախագահ Քոչարյանը շնորհավորեց բնակիչների նորամուտը, խոստացավ աղագայում եւս ուշադրություն դարձնել քաղաքի խնդիրներին:

Լոռու մարզկենտրոն Վանաձորը խորհրդային տարիներին հայտնի էր քիմիական արտադրությամբ: Սակայն խորհրդային Միության փլուզման հետ փլուզվեցին նաեւ մի շարք գործարաններ:

Անցյալ տարի, սակայն, նախագահ Քոչարյանի անմիջական միջամտությամբ որոշվեց վերականգնել եւ գործարկել քաղաքի քիմնարաթելի գործարանը, քիմիական գործարանը: Ռոբերտ Քոչարյանը շուրջ երկու ժամ անցկացրեց այժմ արդեն «Քիմպրոմ-Պրոմթեյ» գործարանում եւ ակնհայտորեն գոհ էր. «Գործարանը հավանաբար սեպտեմբերին կաշխատի: Կարեւորը, որ մեկ տարի առաջ վիճակն ուրիշ էր, հիմա 2200 մարդ է աշխատում»: Նախագահը կարեւորում է գործարանների վերաբացումը: «Հայաստանի մասշտաբով դժվարանում եմ գնահատականներ տալ, բայց Վանաձորի համար այս գործարանը փրկություն կլինի: Հեռագայում կարող է երկրի համար էքսպորտային նշանակություն ունեցող գործարան լինի: Հավանաբար արտադրանքի 90 տոկոսը կառավի արտերկիր: Կարծում եմ, ճիշտ ենք արել, որ մեկ տարի առաջ կնքել ենք գործարք: Գոհ ենք»: Գոհ էր նաեւ Լոռվա մարզպետ Քոչինյանը: «Եվ քաղաքի, եւ մարզի համար այս գործարանը կարեւոր նշանակություն ունի: Միջին աշխատավարձը 40-100 հազար դրամ է: Այուս կողմից, եթե աշխատավարձ ստացողներ կան, նշանակում է շուկան էլ է գործում: Ես կարծում եմ, գործարանը հեռագայում կունենա հանրապետական նշանակություն: Սեպտեմբերին կունենանք առաջին արտադրությունը»:

Լոռու մարզն ունի, ավելի ճիշտ ունեցել է, 390 հազար բնակիչ, որոնց, ըստ ոչ պաշտոնական տվյալների, 40 տոկոսը հեռացել է: Շատերը հեռանում են ընտանիքներով, որը նշանակում է այլեւս ետ չեն գա Հայաստան: Մարդիկ անորոշության մեջ են: Մարզպետ Քոչինյանի կարծիքը, սակայն, այլ է. «Մարզի տարածքում, հանրակրթական դպրոցներում վերջին երեք տարիներին առաջինից-երրորդ դասարան հաճախողների թիվը չի փոփոխվել: Նշանակում է իր ծխողները մնում են այստեղ: Արտագաղթում է աշխատունակ մասը: Գնում աշխատում, ետ են գալիս: Եթե այս գործարանն աշխատեր, այս գործարանի բանվորներն այստեղ կլինեին»:

Ռոբերտ Քոչարյանը մասնակցեց Վանաձորի նորակառույց շենքերից մեկի բացմանը, որը կառուցվել է պետբյուջեից տրամադրված միջոցների հաշվին: Մի քանի տարի առաջ Քոչարյանը խոստացել էր օգնել վերականգնելու աղետից կիսավեր Վանաձորի հիվանդանոցը: Խոսքը կատարեց. գոհ էին թե նախագահը, թե վանաձորցիները: Այդ պաշտպանությունն այցելեց «Բազում» կարի արտադրական միավորում, որտեղ հազար մարդ է աշխատում: Արտադրանքն ուղարկվում է հիմնականում Կալիֆորնիա, արտադրվում են մանկական եւ մեծահասակների վերնազգեստներ: Գործարանի արտադրած մեկ սպորտային հագուստը նվեր ստացավ հանրապետության նախագահը, որից հետո Ռոբերտ Քոչարյանը մարզպետարանում պարգեւներ հանձնեց «Բազում» կարի արտադրական միավորման տնօրեն Ռաֆայել Մխիթարյանին եւ հետմահու՝ Աժ պատգամավոր Սուրեն Ավետիսյանին:

***Երեւան վերադառնալուց առաջ Ռ. Քոչարյանը մամլո ասուլիս տվեց, որի ընթացքում շոշափվեցին աղետի գոտու, մասնավորապես Լոռու մարզի վերականգնման աշխատանքները:***

**– Պրն նախագահ, Ձեր կարծիքով առավելագույնը ե՞րբ կավարտվի աղետի գոտու շինարարությունը:**

– Մոտ մեկ ամիս առաջ Գյումրիում ես ասացի, որ իմ հաշվարկներով մոտ մեկ տարի ուշանում ենք: Ես համարում եմ, որ այդ մեկ տարվա կորուստը պայմանավորված էր մի շարք հանգամանքներով: Մեկ տարի, կարծում եմ: Ինչ վերաբերում է կոնկրետ Լոռու մարզին, ես լավատեսորեն եմ տրամադրված:

**– Այսօր պետությունը բնակարաններ է գնում, որը շատ ավելի էժան է, քան նորերը կառուցելը: Մի՞թե սա չի արագացնում արտագաղթը:**

– Դա պետությունը չի անում, բայց այդ գաղափարախոսությունը մենք ենք առաջ քաշում: Ձուլ տնտեսագիտական հաշվարկներով այնտեղ կառուցել նոր շենք, որտեղ բնակարանները երկու-երեք հազար դոլար են, ուղղակի անիմաստ է: Դրա համար աղետի գոտու վերականգնման համար մենք որդեգրել ենք մի քանի սկզբունքներ: Առաջինը շենքերի ամրացումն էր, որը Գյումրիում բավականին լուրջ արդյունքներ տալիս է եւ երկու անգամ ավելի էժան է կառուցվում, քան եթե նորը կառուցեինք: Մեկ ճանապարհը սա է: Այուս ճանապարհն է նոր շինարարություն այնտեղ, որտեղ անհրաժեշտ է, օրինակ Սոչիսկում: Եվ երրորդը հենց այս ուղղությունն էր, որը, կարծում եմ, սխալ չէր: Բայց մենք այնպես ենք փորձում հաշվարկել, որ աշտարակի խթան չհանդիսանա:

**– Պրն նախագահ, աղետի շինարարության հարցում Ձեր կառավարություններից ո՞րն է ավելի լավ աշխատել:**

– Կարծում եմ դուք կարող եք ավելի ճիշտ գնահատականը տալ: Բավական է ուղղակի հիշել, երբ են աշխատանքները սկսվել՝ անցած տարի, նախանցած տարիների ընթացքում կարող եմ ասել, որ մարտի 10-ին, 19-ին արդեն լայնածավալ աշխատանքները սկսվում էին աղետի գոտում: Այս տարի աշխատանքներն սկսվեցին մայիսին, ըստ էության, մեր ուժային միջամտությունից հետո: Այս տարվա աշխատանքներն անբավարար եմ գնահատում, սակայն հուսով եմ, որ աշնանը աշխատանքի ընդհանուր արդյունքը դրական կլինի:

*Հ. Գ.–Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանը հունիսի 25-ին պաշտոնական այցով լինելու է Վաշինգտոնում, ուր հանդիպելու է ԱՄՆ նախագահ Բիլ Քլինթոնին: Օգտվելով ԱՄՆ-ում լինելու հնարավորությունից, պրն Քոչարյանը հույս ունի քաջալերել սփյուռքի մեր հայրենակիցներին՝ ներդրումներ կատարել աղետի գոտում, մասնակցություն ունենալ աղետի գոտու վերականգնման աշխատանքներին:*

ՎԱՐԿԵՐ

## Համաշխարհային բանկի պատվիրակությունը կժամանի հունիսի 5-ին

### *Հայաստանին տրամադրելիք SAC վարկը ոչ միայն ուշանում է, այլեւ նվազում*

Զուդի Օ'Քոնորի գլխավորած Համաշխարհային Բանկի պատվիրակությունն իր այցը երկու անգամ հետաձգելուց հետո հունիսի 5-ին ի վերջո կժամանի Հայաստան բանակցելու Անդրանիկ Մարգարյանի կառավարության հետ կառուցվածքային բարեփոխումների խոստացված վարկերի տրամադրման ժամկետների ճշգրտման հույժ կարեւոր օրակարգով: Զուդի Օ'Քոնորի պատվիրակությունը, ինչպես նշեցինք, երկու անգամ հետաձգել է իր այցը, քանզի առաջին անգամ այն համընկավ վարչապետ Արամ Սարգսյանի պաշտոնանկության, ապա Անդրանիկ Մարգարյանի եւ նրա կառավարության կազմի հաստատման հետ: Հեռացող կամ նոր-նոր նշանակված վարչապետների հետ քննարկել տնտեսական լուրջ հիմնահարցեր բավականաչափ դժվար է: Այսօր էլ, երբ Անդրանիկ Մարգարյանի կառավարության ծրագիրը դեռեւս ներկայացված չէ խորհրդարան, այսինքն հրապարակված չէ, հետեւաբար եւ վստահության արժանացած չէ, դժվար է պատկերացնել բանակցությունների բարձր օգտակարությունը, սակայն խնդիրների լուծումը հապաղման այլեւս ենթակա չէ: Փաստենք, որ անցած 99 թ. համար նախատեսված SAC-3 վարկի վերջին չափաբաժինը Հայաստանը չի ստացել: ՀԲ տնօրենների խորհուրդը Հայաստանին չտրամադրեց ՏԱՀ-3 վարկի վերջին մնացորդը. պատճառները ՀԲ-ի հետ հաստատված պայմանավորվածությունների խախտումն էր՝ ամենից առաջ բաշխիչ ցանցերի սեփականաշնորհման, էներգետիկ, ոռոգման եւ ջրմուղ-կոյուղու համակարգերում խոստացված բարեփոխումները: Ի հետեւանս, SAC-3 վարկի մեզ հասկացվելիք 15 մլն դոլարը սկսեց նվազել, այսօր քննարկվում է Հայաստանին SAC-3 վարկի գծով ընդամենը 6 մլն դոլարին համարժեք SDR տրամադրելու հնարավորությունը: Ինչ վերաբերում է SAC–4 վարկին, ապա այն, դեռ վարչապետ Վազգեն Սարգսյանի օրոք ձեռք բերված պայմանավորվածությունների հիման վրա պետք է կազմի 45 մլն դոլար:

Արդեն հունիսն է, եւ 2000 թ. ավարտին մնում է 6 ամսից էլ փոքր ժամանակ, սակայն Հայաստանը չի կարողանում կատարել իր պայմանավորվածությունները, ուստի եւ բյուջեի դեֆիցիտի ծածկմանն անհրաժեշտ կառուցվածքային բարեփոխումների վարկի եւ ոչ մի ցենտ չի հասկացվում: ՀԲ եւ ՄԱՀ-ի փորձագետների ամփոփագրերում մեր բյուջեի դեֆիցիտի չափը գնահատվում է 70 մլրդ դրամ: Երեկ Աժ-ում ֆինանսավարկային, բյուջետային եւ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վարդան Խաչատրյանը հրապարակեց մեր դեֆիցիտի շատ ավելի բարձր թիվ: Աճում են չվճարումները եւ աշխատավարձերի, եւ նպաստների, կենսաթոշակների գծով: 2000 թ. բյուջեի սեկվեստրն անխուսափելի է, սակայն ի վերջո ընդամենը 400 մլն դոլարի շրջանակում գտնվող մեր պետբյուջեի կրճատումը չի կարող անհանգստացնել, այսինքն՝ անհրաժեշտ է նվազագույնը 50 մլն դոլարի ֆինանսական ներարկում մեր հյուծված բյուջետային գանձանակ, ինչի հնարավորությունն ունեն ՀԲ-ն եւ ՄԱՀ-ը, սակայն ոչ ոք հենց այնպես գումարներ չի տրամադրի:

Անդրանիկ Մարգարյանի կառավարության համար բարդ ժամանակներ են: ՀԲ-ն եւ Միջազգային արժութային հիմնադրամն ակնկալում են սանձնած պարտավորությունների կատարում, որից հետո միայն կտրամադրվեն բյուջետային դեֆիցիտի ծածկմանն անհրաժեշտ նվազագույն գումարները, բայց պետք է հասկանալ նաեւ, որ անվերջ նման վարկեր ստանալ անհնար է: Նշենք, որ առ այսպիսի ՀԲ-ից տնօրենների խորհրդի հաստատմամբ, Հայաստանը ստացել է 555,35 մլն դոլար, որից 268,8 մլն դոլարը գնացել է բյուջեի ընթացիկ ծեղվածքների ծածկմանը, այսինքն՝ տնտեսագիտական գնահատմամբ՝ լցվել է դանայան տակառը:

Ն. ԳԻԼԲԱՐՅԱՆ

ՀԱՍԱՐՈՍ

## Սիոն վարդապետ Ադամյանը նշանակվել է Գեղարքունյաց թեմի առաջնորդական տեղապահ

ԷՋՄԻԱԾԻՆ, 31 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի տնօրինությամբ մայիսի 22-ի հրամանով Սիոն վարդապետ Ադամյանը նշանակվել է Հայաստանյայց Առաքելական եկեղեցու Գեղարքունյաց թեմի առաջնորդական տեղապահ: Այս մասին «Նոյյան տապանին» հայտնեցին Մայր աթոռի տեղեկատվության համակարգից: Սիոն վրդ. Ադամյանը ծնվել է 1963 թ. Աբադանում (Իրան): Ավարտել է Մայր աթոռ Սբ. Էջմիածնի հոգեւոր ճեմարանը: 1987-1988 թթ. եղել է Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդի օգնականը: 1988-1999 թթ. հոգեւոր ծառայության է անցել Բուլղարիայում՝ իբրեւ Վառնայի հոգեւոր հովիվ: 1999 թ. վերադառնալով Հայաստան, կրկին նշանակվել է Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդի օգնական:

## Վաչե Մանուկյանը 750 հազար դոլար նվիրաբերեց Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսությանը

ԱՆԹԻԼԻԱՍ, 31 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսարանի դիվանից տեղեկացրել են, որ ազգային բարերար Վաչե Մանուկյանը՝ ընդառաջելով Արամ Ա կաթողիկոսի խնդրանքին, 750 հազար ԱՄՆ դոլարի նվիրատվություն է կատարել Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսությանը: Գումարն ամբողջությամբ ծախսվելու է Անթիլիասի մայրավանքի միաբանության հատուկ մասնաշենքի եւ դրան կից այլ կառույցների վերաշինման ու կահավորման նպատակով, որոնք անվանակոչվելու են «Եղիշե եւ Սիրան Մանուկյան միաբանական շենք» եւ «Վաչե եւ Թամար Մանուկյան շենք»: Այդ առթիվ, վեհափառ հայրապետն իր բարձր գնահատականն է հայտնել Վաչե Մանուկյանին՝ իշխանավայել նվիրատվության համար: Վաչե Մանուկյանը միաժամանակ 300 հազար դոլար է նվիրաբերել «Եղիշե Մանուկյան» ազգային ֆոնդին, որը ծախսվելու է դպրոցի համար հանակարգիչների եւ աշակերտական նոր ավտոտրանսպորտի ձեռքբերման նպատակով: Վեհափառ հայրապետը հայտարարել է, թե ընդառաջելով իր խնդրանքին, Վաչե Մանուկյանը նաեւ 100 հազար դոլար է նվիրաբերել Եկեղեցիների համաշխարհային խորհրդին, որի ատենապետն է Արամ Ա կաթողիկոսը: Վաչե Մանուկյանն առաջին հայն է, որ նման նվիրատվություն է կատարում ԵՀԽ-ին:

## Տավուշի մարզը հայ-ադրբեջանական հակամարտության ժամանակ 120 մլն դոլարի վնաս է կրել

ՏԱՎՈՒՇ, 31 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: 1992-94 թթ. ադրբեջանական հրետակոծության հետեւանքով Տավուշի մարզի սահմանամերձ համայնքներում տարբեր աստիճանի վնասվածքներ են ստացել 7 հազարից ավելի տներ, ավերակների են վերածվել 234-ը: Ընդհանուր վնասը կազմել է շուրջ 120 մլն դոլար: Տավուշի մարզպետարանի տվյալներով, ռազմական գործողությունների պատճառով սահմանամերձ գյուղերից մեկնել են 28 հազար մարդ, որոնցից 15 հազարը հեռագայում վերադարձել են: Անցած տարիներին Հայաստանի կառավարությունը ֆինանսական միջոցներ չի հատկացրել ավերված տները վերականգնելու համար, եւ որպես հույս է մնում միջազգային կազմակերպությունների օգնությունը: Անցնող ամսին մարզի սահմանագոտի էր այցելել ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի ներքին տեղահանված անձանց հարցերով ներկայացուցիչ Ֆրենսիս Դենգը, որն անհրաժեշտ տեղեկատվություն էր հավաքում այն ծրագրերի համար, որոնք ներքին տեղահանված անձանց վերաբնակեցման նպատակով մշակում է ՄԱԿ-ը:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 9 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի խմբագիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
ֆաքս 562863, AT&T (3742) 151065,
e-mail: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱԻԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՀՐԱՅՐ ՁՕՐԵԱՆ / հեռ. 529353
Համակարգչային ծառայություն / 562941
Apple Macintosh
հանակարգչային շարուածք «Ազգ» թերթի
Նյութերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

# ՈՒՇԱԳԻՐ

էլեկտրատրանսպորտից կենսաթոշակառուների եւ առաջին ու երկրորդ խմբի հաշմանդամների անվճար երթեւեկության օրինագիծը նախագահ Ռոբերտ Քոչարյանի հեռածգման առաջարկությամբ երեկ ԱԺ թեժ բախման առիթ դարձավ: «Միասնությունն» ու «Կայունությունը» երկընտրանքի մեջ էին համաձայնել նախագահի արգելանքին եւ այս արտոնության վերաբերյալ քննարկումները հետաձգել մինչեւ 2001 թ. պետբյուջեի նախագծի մշակումը, կամ գործադիր իշխանությանն առավել համառ ու հաստատակամ առաջարկել նախ՝ ցույց հաշվարկել հայաստանյան կենսաթոշակառուների էլեկտրատրանս-

պորտով անվճար երթեւեկության համար անհրաժեշտ գումարը՝ վեց ամսվա կտրվածքով, ապա գտնել դրա աղբյուրը: Ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Լեւոն Բարխուդարյանի առջեւ հուր էր, եւ՝ ջուր: Ամենից առաջ պարզվեց, որ 2000 թ. վերջին վեց ամիսների համար անհրաժեշտ գումարը ոչ թե 1 մլրդ 495,4 մլն դրամ է, այլ շուրջ 500 մլն: Փաստացի կառավարությունը հաշվարկել էր վերջին 6 ամիսների ընթացքում էլեկտրատրանսպորտի սպասարկմանն անհրաժեշտ գումարը եւ ոչ թե զուտ կենսաթոշակառուների եւ հաշմանդամների ծախսերը: Անտարակույս, էլեկտրատրանսպորտի վիճակը խիստ անխիթար է, բյուջետային գանձանակը՝ գրեթե դատարկ, բայց հույս դնել, թե ուշացումներով կենսաթոշակ ստացող կամ ամիսներով նոպաս չստացող մեր հաշմանդամներից հնարավոր կլինի գանձել 1,5 մլրդ դրամ եւ դրանով կարկատել էլեկտրատրանսպորտի ֆինանսական ճեղքվածքը, ոչ միայն բարոյական չէ, այլեւ տնտեսագիտորեն սխալ է: Տնտեսագիտության եւ բարոյականության չափանիշներին գումարվում է քաղաքականը: ԱԺՄ, «Իրավունք եւ միաբանություն», ՀԿԿ խմբակցությունները միանշանակ կողմ էին հաղթահարելու հանրապետության նախագահի արգելանքը, վկայակոչվեցին եւ Հայաստանի Սահմանադրությունը եւ սեփականաշնորհումից ստացված գումարները, որտեղից կարելի է ծեռ բերել պահանջվող 500 մլն գումարը:

Խորհրդարանում շրջող կասակի համաձայնությամբ «Միասնություն» խմբակցությունը փորձեց Քրիստոսի պես «հարություն առնել ի մեռելոց», խմբակցությունը տեւական ընդմիջումից հետո նիստ գումարեց, սակայն այդ նիստն աղարդյուն եր: Հանրապետականներն առավել հեռատես գտնվեցին եւ սիրեցին ՀԺԿ ներկայացուցչին ելույթ ունենալ ու բարձրաձայն աջակցել կառավարության եւ նախագահի այս որոշմանը: Սակայն ՀԺԿ պատգամավոր Աշոտ Գալոյանը դիվանագիտորեն խոսեց փոխըմբռնման եւ կառուցողական ճանապարհի մասին. «Պոպուլիստական ճանապարհով շոյելը հեշտ է, ավելի բարդ է լծակներ ունենալով սոցիալական երկիր կառուցելը»: «Միասնությունն» այդպես էլ հստակ պատասխան չտվեց՝ պատրաստ է ինքն իր ընտրողների առաջ խոստովանել, որ չի կարողանում 500 մլն դրամ գտնել, որպեսզի կենսաթոշակառուներն ու հաշմանդամները անվճար երթեւեկեն էլեկտրատրանսպորտով: Ֆինանսների նախարարության կողմից գործի դրվեցին անհեթեթ փաստարկներ՝ պատճառաբանվեց, թե Գյումրիի եւ Վանաձորի, ինչպես նաեւ Հայաստանի այլ մարզերի կենսաթոշակառուներն իրենց սոցիալապես խոցված կզգան, քանի որ տվյալ արտոնությունից չեն կարող օգտվել պարզ մի պատճառով՝ բացի Երեւանից, ուրիշ ոչ մի տեղ էլեկտրական տրանսպորտ չկա: Բայց ամենազարմանալին ֆինանսների նախարարի խոստովանությունն եր, թե իրենց հաշվարկներում ներառվել է Գյումրիի եւ Վանաձորի էլեկտրատրանսպորտի ծախսը, այնինչ այնտեղ չկա ոչ մետրո, ոչ տրամվայ կամ տրոլեյբուս:

Սոցիալական առողջապահության եւ բնապահպանության հարցերի հանձնաժողովի նախագահ Գագիկ Թադեւոսյանն անկեղծ եր գործադիր իշխանության լոբբիինգը հասկանալի է, բայց պատգամավորները պետք է սկզբունքային լինեն: Նա հստակապես բացասական գնահատեց ՀԺԿ դիրքորոշումը, որն անգամ այս պահին չի կարողանում վերջնական վճիռ ընդունել. «Շատ լավ պարզվեց բոլորի դիմակը» արտահայտությունն ի ցույց դրեց մի պարզ ճշմարտություն՝ հանրապետության նախագահին նման հաշվարկներ եւ առաջարկ ներկայացրած ուժերը փաստացի նոպակ ունեն առավել վարկաբեկելու առանց այն էլ բարձր հեղինակություն չունեցող խորհրդարանը եւ ընդհանրապես իշխանությունը:

«Միասնություն» խմբակցության անդամ Գուրգեն Եղիազարյանն **«Ազգին»** մանրամասնեց. «Պատկերացնում եք՝ Ազատության հրապարակը, այնտեղ հնչող հականախագահական կոչերը, եւ այդ ֆոնի վրա Ռոբերտ Քոչարյանը նոր քայլ է կատարում հասարակության դեմ, որովհետեւ եթե նա վետո է կիրառում կենսաթոշակառուների եւ հաշմանդամների անվճար երթեւեկության օրենքի հանդեպ, ապա հասարակությունը միանշանակ բացասական է գնահատում դա: Բայց ո՞վ է այդ քայլին մղել նախագահին եւ նրան հաշվարկներ ներկայացրել՝ կառավարությունը եւ ֆինանսների նախարարությունը: Այնինչ աղբյուրներ կա՛ն, նշեմ դրանցից ընդամենը մեկը: Վերջին ամիսներին միայն արտասահմանյան ծխախոտի պատշտոնական ներմուծումը նվազել է 17 հազար արկղով, այնինչ եթե դուրս գանք, ապա կհամոզվենք, որ արտասահմանյան սիգարետի վաճառքն ու իրացումը բնավ չեն նվազել: Միայն ծխախոտի մասսայական ներմուծման պատճառով պետբյուջեն կորցնում է ամսական 3 մլն դոլար: Փոխանակ նախագահին ներքաշեք նման վիճակի մեջ, փորձեք աշխատել եւ բացահայտել այսպես կոչված ներքին ռեզերվները, որոնք մեր բյուջեի հարկային մուտքերն են»:

Կառավարության հետ հանդիպումն անխորհուրդ եր, եթե նկատի չառնենք ոչ վաղեմի անցյալում կոմունիստ պատգամավոր, այսօր նախարար Լեոնիդ Հակոբյանի արտառոց փոխակերպումը: Մի պատգամավոր, որը դեմ եր քվեարկել ներկա կառավարության կողմից իրականացվող բյուջեի նախագծին, երեկ առարկություն չհանդուրժող տոնով պատգամավորներին դաս եր տալիս՝ ընդելով, թե պետք չէ բարձրացնել բնական աղետներից տուժած մարզերին պետական օգնություն կամ օրենքով հասանելիք աշխատավարձ ու կենսաթոշակ վճարելու հարցերը: Լեոնիդ Հակոբյանը համոզված եր, որ «իր կառավարությունն» ամեն ինչ գիտե եւ ամեն ինչ անում է, եւ աղարդյուն եր ԱԺ փոխխոսնակ Տիգրան Թորոսյանի փորձը նրան ԱԺ կանոնակարգի շրջանակներում պահելու: Իրադարձությունների զարգացման միակ խարդավանքը՝ պատգամավոր Մանուկ Գասպարյանի կողմից ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Լեւոն Բարխուդարյանին ուղղված խոսքն եր՝ արժանապատվություն ունենալու եւ դիմում գրելու մասին: Իսկ պետեկամուտների նորանշանակ նախարար Գագիկ Պողոսյանը, որի ոլորտում իրավիճակը վատթար է, չմեկնաբանեց կադրային փոփոխությունների բուն շարժառիթը՝ հստակապես Երվանդ Զախարյանի նշանակումը Գագիկ Գեւորգյանի պատշտոնում, Երեւանի ամենաշահութաբեր շրջանների հարկային տեսչությունների պետերի գրած դիմումները: Պետեկամուտների նախարարությունում կադրային փոփոխությունները բազմաթերս են, քանզի ով ունի եկամուտ՝ նա էլ ունի իրական իշխանություն:

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԱՔԱՐՅԱՆ

# Կենսաթոշակառուների եւ հաշմանդամների անվճար երթեւեկը քաղաքական հարց է

*Ո՞վ եւ ինչպե՞ս է հանրապետության նախագահին հաշվարկներ ներկայացնում*

ՊԱՏԿԵՐԱՅԻՆ

# Հայաստանում ծխում է յուրաքանչյուր երրորդ դեռահասը

**ԵՐԵՎԱՆ, 31 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հայաստանում ներկայումս ծխում է յուրաքանչյուր երկրորդ չափահասը եւ ամեն երրորդ դեռահասը: Մեծահասակները ծխում են օրական 5–45 հատ ծխախոտ, իսկ դեռահասները՝ 6–10 հատ: Ըստ որում, եթե ծխախոտը թողնելու ցանկություն է հայտնում մեծահասակների 38%-ը, ապա դեռահասների մոտ այդ ցուցանիշը կազմում է 51%: Հրապարակելով այս տվյալները՝ ծխելու դեմ պայքարի համաշխարհային օրվա կապակցությամբ կազմակերպված կլոր սեղանի ընթացքում ՀՀ գլխավոր սանիտարական բժիշկ Վլադիմիր Դավիդյանցը հայտնեց, որ չնայած դրան, ծխողներից քչերն են կարողանում բուժվել այս հիվանդությունից: Ծխելու հիվանդությունը, ըստ գլխավոր սանիտարական բժշկի, ոչ այնքան ֆիզիկական, որքան հոգեբանական է եւ դրանից ազատվելու համար կարեւորվում է հատկապես ընտանիքի եւ հոգեբանի դերը: Հարկավոր է նաեւ այս չարիքի նկատմամբ պետական մոտեցում եւ հայեցակարգ, որն առայսօր բացակայում է: Դավիդյանցի խոսքերով, բացը լրացնելու նպատակով Առողջապահության նախարարության կողմից մշակվել է ծխելու դեմ պայքարի ազգային հայեցակարգ: Այն ներկայումս քննարկվում է տարբեր գերատեսչություններում, որից հետո կներկայացվի կառավարություն եւ հիմք կծառայի ծխելու մասին ազգային օրենքի մշակման համար:**

**Կլոր սեղանին մասնակցող «Գրանդ Տոբակոյի» նախագահ Հրանտ Վարդանյանը իր հերթին դեռահասների շրջանում հակածխախոտային քարոզարշավին աջակցության պատրաստակամություն հայտնեց: Նա նշեց, որ իրեն, որպես արտադրողի, ձեռնտու է ավելի շատ ծխախոտ արտադրել: Սակայն որպես ՀՀ քաղաքացի կոչ է անում պետական մարմիններին ավելի կոշտ պայքար մղել թե՛ ծխախոտ արտադրողների եւ ներմուծողների, թե՛ ծխախոտի գովազդման դեմ:**

**Նշենք, որ Առողջապահական համաշխարհային կազմակերպության տվյալներով ծխելու հետեւանքով առաջացող հիվանդություններից ամեն օր մահանում է 11 հազար մարդ: Ծխախոտն է քաղցկեղի դեպքերի 30%-ի, ինֆարկտի 30%-ի եւ թոքային հիվանդությունների 80%-ի առաջացման պատճառը: Իսկ ծխելու հետ կապված տարեկան տնտեսական վնասը կազմում է 200 մլրդ դոլար:**

# ՀՀՇ-ն «հայտարարում է» իր պատասխանատվությունը...

***Երեկ «Աջ» ուժերի դաշինքն իր հավաքում որոշ ինքնաքիքություն թույլ տվեց. ներկայիս իշխանությունների ավանդական քննադատությունից բացի նաեւ հայտարարեց իր «պատասխանատվությունը» սեփական իշխանության սխալների համար:***

Սակայն վաղաժամ զարմանալ կամ ուրախանալ չարժե: Պարզապես այս քայլը հեղինակություն փրկելու մի միջոց եր, ձեւական մի ժեստ: Նոր դաշինքում միավորված նախկին հիշաչինքները ժողովրդի ու լրատվամիջոցների կողմից այնքան քննադատվեցին երբեմնի չարաշահումների համար, մինչեւ որ վերջապես ելքը գտան. դաշինքը չի կարող քաղաքական կայացման ուղի հարթել եւ մեղմել շրջապատի բշնամանքն իր հանդեպ, քանի դեռ չի խոստովանել մեղավորության իր բաժինը նախորդ վարչակարգի մեղքերի համայնապատկերում: Հայտնի է, որ ապաշխարողին խիստ չեն դատում: Սակայն հայտնի է նաեւ, որ ապաշխարանքն ինքնանպատակ չէ եւ ոչինչ չարժե առանց գործնականում արտահայտված քավության: Բնականաբար, վերջինի մասին խոսք իսկ չեղավ. եւ ինչպե՞ս լիներ, եթե պատասխանատվությունն էլ կիսատ ստանձնեցին...

Նախ նշենք, որ հավաքը նախագահող Վիգեն Խաչատրյանի եւ Դավիթ Շահնազարյանի ելույթները նախկինում արտահայտած իրենց մտքերի կրկնությունն էին՝ Մեղրիի խնդիր, ԱԺ-ի քննադատություն, Սահմանադրական փոփոխությունների պահանջ, տարբեր-տարբեր որակումներ նախագահ Քոչարյանի հասցեին, իրենց փրկարար դերը հայ ժողովրդի նորագույն պատմության էջերում եւ այլն: Չենք մանրամասնում, քանզի ուրիշ առիթներով արդեն անդրադարձել ենք նրանց «հնչեղ» տեսակետներին, եւ դրանց վերաբարդումը կրկնել չարժե: Այսպիսով, միակ ինքնատիպն այս հավաքում նրանց կիսաս-պոռաս խոստովանություններն էին, որ թերեւս պիտի ընկալեինք իբրեւ քաղաքական պատասխանատվություն անցյալի համար: Այդ մասին առաջինը նշեց ՀՀՇ վարչության նախագահի պատշտոնակատար Ալեքսանդր Արզումյանը: Սակայն իր խոսքի սկզբում նշեց, որ «դաշինքն ազնիվ նպատակադրումներ ունի եւ ոչ թե ընդդեմ է գործում, այլ՝ հանուն...»: Նա հայտարարեց. «ՀՀՇ-ն կրում է 95–96 թթ. խորհրդարանական ու նախագահական ընտրությունների, Հրանտ Բագրատյանի կառավարության, այն ժամանակվա ԱԺ-ում ընդունված բոլոր օրենքների, Դավիթ Շահնազարյանի եւ նրա ղեկավարած ազգային անվտանգության համակարգի, Վիգեն Խաչատրյանի համար պատասխանատվությունը»: Այս խոսքս հայտարարությունից հետո Դավիթ Շահնազարյանն անմիջապես զուգահեռ անցկացրեց. «Իսկ այս խորհրդարանում կա՞ որեւէ ուժ, ով ինչ-որ բանի համար պատասխանատվություն կսանձներ»: Սակայն, այնուամենայնիվ, ճշգրտենք. այս հայտարարությունից ոչինչ չի փոխվելու, եւ անհետեւանք խոսքերը պետք չէ լուրջ ընդունել: Ինչ վերաբերում է Հրանտ Բագրատյանին, ապա նա եւս փաստեց, որ նախկին իշխանություններն իրոք որոշ չափով պատասխանատու են այսօրվա վիճակի համար: Նա պարզաբանեց, որ իրեն մեղավոր է համարում ո՛չ թե սեփականաշնորհման գործընթացին զուգորդած թալանի, այլ՝ սեփականաշնորհման ծրագիրը դանդաղ իրագործելու մեջ: Թալանը նա, ըստ էության, առհասարակ ժխտեց: Նույն կերպ ժխտեց նաեւ էներգետիկայի ոլորտում հայտնի չարաշահումների (ի դեպ՝ արդեն ապացուցված) փաստը, իսկ այդ գործով զբաղվողներին որակեց իբրեւ զրպարտիչների: Առանց մեկնաբանելու էլ պարզ է, որ վերոհիշյալ իբր խոստովանությունը ոչինչ չարժե:

Իսկ ընդհանուր առմամբ դաշինքը դժգոհ է: Դժգոհ է ժողովրդից, լրատվամիջոցներից, իշխանություններից, որ իրենց դատապարտում են ու «ջարդում»՝ սեփական երկրում պահելով այլախոհի կարգավիճակի մեջ, ինչն էլ իրենց խանգարում է «իսկական» ընդդիմություն դառնալ: Այս կապակցությամբ ընդդիմություն դառնալու հավակնորդներին հիշեցնենք ժողովրդական ասույթը. «Ինչ ցանես, այն էլ կհնձես...»: Իսկ մարդկանց, այնուամենայնիվ, խոստովանություններով «կուս տալ» չարժե: Համոզիչ չէ:

ԼԵՌՆԻԿ ԲԱԲԱՅԱՆ

ԿԼՈՐ ՍԵՂԱՆ

ԱԶԳ

# ՕՐԱԿԱՐԳ

ՏԵՍԱԿԵՏ

## Իրավունքը որպես գայլի վկայական

Ի՞նչ լավ չէր խորհրդային ժամանակներում: Բոլորը գիտեին, որ «իրավունք չունեն»: Այս մասին երկրորդ կարծիք ոչ ոք չուներ, եւ խոսակցությունն էլ անիմաստ էր: Հաճախակի Մոսկվա կամ այլ քաղաքներ այցելողները կարող էին հաստատել, որ նույնիսկ մանկապարտեզային տարիքի երեխաները բակում խաղալիս միմյանց սաստում էին. «Не имеешь права»: 88-89 թթ. տրամագծորեն հակառակն էր: Բոլորը գոռում էին «իրավունք»: Եվ իրավունքը տրվեց: Դուք տեսե՞լ եք գարնան առաջին արեւ օրերին գոմից դուրս թողնված հորթուկ: Ուրախությունից եւ սաստած ազատությունից զարմացած, համար վերածվեց աղետի:

Այսօր իրավունքի հարցը մեզ մի այլ մեկնաբանությամբ են ներկայացնում: Արեւմուտքի ներկայացվող մոդելը (այսպես անվանենք) վրդովվելու հիմք է տալիս: Ինչո՞ւ, որովհետեւ նրանում իրավունքի ոգին, բուն էությունը երկրորդ պլանում է, առաջնությունը տրված է մարդու իրավունքների բացարձակացման գաղափարին: Հետին նպատակներով: Նկատենք, որ իրավունքի հարցի էությունն ասելիքի նրբագեղության մեջ չէ, ինչպես փորձում են ներկայացնել մեզ: Ավելին՝ մարդու իրավունքների պաշտպանության կատեգորիան Պրոկրուստյան մահիճ չէ: Տարբեր երկրներում տարբեր մոտեցում պետք է լինի՝ կախված երկրի ազգաբնակչության էթնիկ կառուցվածքից, սոցիալական վիճակից, ավանդույթներից, մշակութային եւ կրոնական ըմբռնումներից, երկրի զարգացման աստիճանից, տվյալ ազգի (երկրի) բարոյահոգեբանական նորմերից եւ նույնիսկ աշխարհագրական դիրքից: Ամերիկան հարուստ երկիր է: Ժողովրդի բարեկեցությունն աճում է, միշտ մնա, թե հասնեն սննդի ծրի բաշխմանը: Արդյոք սա չի՞ բերում գերկշռության վտանգավոր երագին: Ամեն ինչի ավտոմատացումը աշխատանքը ուղեղի փոխարեն, չի՞ դարձնում մարդուն ծույլ կամ բորբոքում նրա մեջ ագրեսիվություն: Հար եւ նման բարոյահոգեբանական գործոնները միանշանակ տարանջատում են իրավունքի վերաբերյալ մեր եւ Արեւմուտքի պատկերացումները: Ասվածից հետեւում է, որ չափանիշների, արժեքների, վարքագծի գնահատման հարցում չի կարելի տարբեր ազգերին, հասարակություններին միեւնույն կաղապարով քննության ենթարկել: Այստեղից փորձել Հայաստանում կիրառել իրավունքի պաշտպանության առաջարկվող բոլոր նորմերը տառ առ տառ անընդունելի է: Իհարկե, նորմերի որոշ մասն ընդունելի է: Ասենք աշխատանքի, ընտրությունների, խոսքի ազատության, սոցիալական հարցերի, բանտարկյալների պաշտպանության, կանանց ու տղամարդկանց իրավահավասարության հարցերում: Սակայն այսօր փորձում են մեզ համոզել ճանաչելու մեր փոքր երկիրը դաժանորեն բզկտող «Եհովայի վկաներին», արդեն խոսում են սեռական փոքրամասնությունների «իրավունքի» մասին: Վաղն իրենց օրինակով կստիպեն մեր երեխաներին դասի տալ ծնողներին, ասենք, սաստելու, թույլ չտալու, ականջը ծգելու համար՝ կոչելով դա «երեխայի պաշտպանություն»: Եվ կպարզվի, որ մենք իրավունք չունենք դաստիարակել մեր երեխաներին մեր ազգային ըմբռնումներով: Չենք կարծում, թե որեւէ մեկի մտքով անցնի մեղադրել ամերիկյան դպրոցների տնօրենների դպրոցի մուտքի մոտ տպահովիչներով լի արկղ տեղադրելու եւ երեխաներին հորդորելու անպայման օգտվել դրանցից: Իրենց գործն է: Ամեն ազգ ինքնուրույն է իր անհատական ամեն գժություն կարող է անել՝ կոտրել, հարու տալ, թափել: Եվ ահա, 70 տարվա բռնատիրական համակարգից հետո զանգվածներին ակնթարթորեն ազատություն տրվեց: Բնական է, որ նման ազատությունը չլինելով օրինաչափ զարգացման արդյունք, չէր կարող բացասական հետեւանքներ չունենալ: Զանգվածների կողմից դա ընդունվեց որպես ամենաթողություն, իսկ իշխող ռեժիմի ՀՀՇ-ի «երեւելիների» շնորհիվ իրավունք հասկացողությունը թեւավոր խոսքի «իրավունք» ստացավ. «Մեր դեմ խաղ չկա»: Եվ իրոք, այնպես ստացվեց, որ ազատության, ժողովրդավարության, իրավունքի պատկերացումները դեֆորմացիայի ենթարկվեցին 90-ականների սկզբներին, երբ բացահայտ նահանջ տեղի ունեցավ 88-89 թթ. պայքարի գաղափարական սկզբունքներից եւ ժողովրդի համար անսպասելի հաստատվեց ՀՀՇ-ի մողելի իշխանություն, որի համար բնորոշ եղան թալանը եւ ամենավայրի գաղափարների զուգորդումները սկսած Տեր-Պետրոսյանի «ազգային գաղափարախոսությունը կեղծ կատեգորիա է», մինչեւ «տարվա մարդ» Բագրատյանի «հո մեզ հենց էնպես չեն կոտրել» «գլուխգործոցը»: Սա էլ պայմանավորեց բարոյահոգեբանական գործոնների այդ թվականներին հասարակության գիտակցության մեջ իշխող աղճատված պատկերացումը ամենաթողությանը, եւ այնտեղ, ուր վերջապես ընդհանուրի իրավունքը, սկսվեց ՀՀՇ-ի կամայականությունը, որ հասարակության եւ հասարակության իրավունքի խնդիրներն իր ըմբռնումներով լուծելու: Վերջին հաշվով, եթե գոյություն ունի անհատի իրավունք, գոյություն ունի նաեւ հասարակության ընդհանուրի իրավունք: Անհրաժեշտ է տարբերել դրանք: Նախագահին առընթեր իրավունքների հանձնաժողովը չի՞ տեսնում վտանգը: Չմոռանանք, անհատին հարմարվելու դեպքում հասարակությանը նետում ենք անիշխանության գիրկը:

Այդպես եղավ Տեր-Պետրոսյանի ռեժիմի օրոք, նույնը, կամ ավելի վատթար վիճակ իր հետեւանքներով կարող է առաջանալ այժմ, օտար «բարեհունչ» անուններով կազմակերպություններին Հայաստանից չվտարելու պարագայում: Հետեւապես, նորանկախ պետության անցումային, սոցիալական դժվարին փուլում հասարակության ազգի իրավունքի կատեգորիան գերակա է անհատի իրավունքի զանազան դրսեւորումների նկատմամբ, որը բացատրվում է ազգային անվտանգության պարտադիր նկատառումով: Եթե ոչ, ապա իրավունքն ու ամենաթողությունը նույնանում են: Մեծ սատանայատես Կաշպիրովսկու այցը Հայաստան վտանգավոր էր եւ անցանկալի: Նույնիսկ առողջապահության նախարարությունը վրդովվեց: Այնինչ, առանձին անհատներ սեփական շահից ելնելով՝ գայլի վկայական հանձնեցին այդ արարածին: Ով ո՞ւմ իրավունքը խախտեց: Մեզ համար բացարձակապես անընդունելի է «Միջազգային նորում» կազմակերպության գործունեությունը Հայաստանում: Այս կազմակերպությունը նախ սադրանքի վարպետ է, մատնոցում փոքրիկ որոնող: Ըստ նրանց, «Եհովայի վկաների» գործունեությունը Հայաստանում ծանր է» (խե՜ղճ, խե՜ղճ «վկաներ»): Հետաքրքիր է, այս կազմակերպության հայաստանցի ոգեշնչողները փորձե՞լ են գոնե մեկ անգամ ներկա լինել այս ժանտ աղանդի հավաքին: Աղանդ, որի մտածողությունը բանականության համար անմատչելի է, տրամաբանության միջոցներով արտահայտվել չի կարող, պատճառական բացատրություն չունի եւ օրինաչափության չի ենթարկվում: Կասկած չկա, որ «Միջազգային ներումը» արտերկրի գաղտնի ծառայությունների համար է աշխատում: Այլապես ի՞նչ է նշանակում. «Կազմակերպությունն այլընտրանքային ծառայության օրենքը պարտադիր է համարում նրանց համար, ովքեր չեն կարող կատարել (՞) զինվորական ծառայությունը ելնելով կրոնական, հոգեկան, էթնիկական եւ այլ համոզմունքներից»: Ուշադրություն դարձնենք. տղերքի արանքում կոչ կա չծառայել տվյալ երկրի բանակում հիշված նկատառումներով: Անցած աշնանը Ռուսաստանի Թաթարական Հանրապետությունում որոշ երիտասարդներ հայտարարեցին, թե չեն ցանկանում ծառայել բանակում, քանի որ չեն կարող կռվել իրենց մուսուլման եղբայրների դեմ: Համեցեք: Այսպես կարելի է. պետություն կործանել «կրոնական», «էթնիկական» եւ իրավունքի այլ կեղծ պատճառաբանություններով: Կարելի՞ է պատկերացնել մեր տարածաշրջանում պետություն առանց բանակի: Իսկ ո՞ւր մնաց օրենքը, քաղաքացու պարտականությունը: Եթե սա ծաղր չէ, ապա բացահայտ դավադրություն է: Սա ձեզ իրավունքի միտումնավոր, սխալ մեկնաբանություն: Նորից հարց է առաջանում. ի՞նչ պարտադիր է, որ իրավունքի բոլոր բաղադրիչներում մեր ժողովուրդը համաձայնի Արեւմուտքից առաքված «հավատա ծարավիդ» ռոբոտային հրամանին: Սա այս առաքյալների դեմ պետք է պայքար ծավալի նախագահին առընթեր մարդու իրավունքների հանձնաժողովը նրանց ջրաղացին ջուր լցնելու փոխարեն:

Հայկական խնդրում հայերի հակառակորդները Խորհրդային Միության փլուզումից հետո փորձում են հայկական հարցն այլ մեթոդներով լուծել: **«Ազգը»** գրում է. «Նոր մոտեցումներ առաջ քաշվեցին, որոնց հիմքում ընկած է հայ ժողովրդի հոգեւոր էության չեզոքացումը, այսինքն ազգային ոգու, ազգային բնավորության, ազգային գիտակցության, ազգային հոգեբանության քայքայումը, տարալուծումը»: Այս նպատակին են ուղղված վերոհիշյալ բոլոր արեւմտյան կամ արեւմտյանի հողի տակ թաքնված հարեւան երկրների կողմից ֆինանսավորվող կազմակերպությունների ջանքերը: Այսպես. «Ընտանիքի առողջության պահպանման հայկական ասոցիացիան» (ինչ անմե՞ղ անուն) քարոզում է հոմոսեքսուալիզմ, «մեզ՝ հայերիս համար անընդունելի եւ այլանդակ սեռական շեղվածություն», «Եհովայի վկաները» կրոնի հողի տակ փորձում են ոչնչացնել մեր ազգային դիմագիծը: «Միջազգային ներում», որ այլ նպատակներ հետ ձգտում է կազմալուծել ազգային բանակը: Այս ամենին ավելացնենք նաեւ Հելսինկյան ընկերակցության հայաստանյան ներկայացուցչությունը, որի գործունեությունը հար եւ նման է վերոհիշյալներին: Եվ այս բոլորը մարդու իրավունքների, ժողովրդավարության թավշյա ծածկոցով ծածկված:

Առանց վարանելու կարելի է ասել, որ այս բոլոր խնդիրներն այսքան սուր հակահայկական բնույթ չէին կրի, եթե օտարի խարդավանքներին մասնակցություն չբերեին հիշյալ կազմակերպությունների, աղանդների տեղական ծայնակիցները, որոնք կատարածուի դեր են ստանձնել եւ, անշուշտ, վարձատրվում են իրենց արեւմտյան տերերի կողմից:

Բազմիցս ասվել է. այս բնույթի հարցերը պարտավոր է լուծել պետությունը: Պետությունը, իշխանությունը պետք է տեր կանգնի իր ժողովրդին, փակի ավարառուների ճանապարհը: Կառավարությունն ու Ազգային ժողովը չլսելու են տալիս: Միգուցե չե՞ն կանխազգում վտանգը: Սպասենք:

ՌՈՒԲԵՆ ԲԱՂԱՅԱՆ

## Ռադիոէլեկտրոնիկայի աղագան անորոշ է

Հայաստանի ռադիոէլեկտրոնային ձեռնարկություններն այս տարվա առաջին 4 ամիսներին թողարկել են ընդամենը 206 մլն դրամի արտադրանք: Այս թիվն արդեն պատկերացում է տալիս պետական բաժնեմաս ունեցող այս ոլորտի 37 ձեռնարկություններում ստեղծված վիճակի մասին: Նախկինում ԽՍՀՄ ռազմաարդյունաբերական համալիրի մաս կազմող այս ձեռնարկությունների արտադրական ծավալների տվյալները չէին հրապարակվում: Սակայն անկասկած է, որ այն ժամանակ թողարկվող արտադրանքի ծավալները տասնյակ եւ գուցե հարյուրավոր անգամներ գերազանցում էին վերոհիշյալ թիվը:

Բնական է, որ ԽՍՀՄ փլուզումն առաջին հերթին անդրադարձավ այս ոլորտի ձեռնարկություններին, եւ պատվերների դադարեցումը կենտրոնից վաթսարագույն վիճակի մեջ դրեց նրանց: Հետագայում եւ մինչ օրս ռադիոէլեկտրոնիկան դուրս չեկավ այդ վիճակից: Մասնագետների կարծիքով, արդյունաբերական այս ճյուղը Հայաստանի համար կարող է հեռանկարային համարվել մի շարք պատճառներով: Նախ՝ փոքր հումքատար եւ փոքր էներգատար է, հետեւաբար չի պահանջում տրանսպորտային մեծ ծախսեր: Այսինքն՝ իրական հնարավորություններ կան ցածր ինքնարժեքով արտադրանք թողարկելու համար: Եթե այս ամենին գումարենք մեր գիտական ներուժը, նյութատեխնիկական որոշակի բազան, ապա ռադիոէլեկտրոնիկան հեռանկարային ճյուղ համարելու տեսակետը հեռու չի թվում իրականությունից: Սակայն այստեղ առկա են լուրջ խնդիրներ, որոնք հնարավորություն չեն տալիս կյանքի կոչել ռադիոէլեկտրոնիկայի զարգացման հույսերը: Մեր ձեռնարկություններից գրեթե բոլորի սարքավորումները հնացած են եւ չեն համապատասխանում օրվա պահանջներին: Անգամ փոքր քե շատ ժամանակակից սարքավորումներ ունեցող բացառիկ 2 ձեռնարկությունները՝ «Մարսը» եւ «Տրանզիստորը», անցած տարիների ընթացքում ետ մնալով համաշխարհային տնտեսական գործընթացներից, ետ են մնում նաեւ սարքավորումների անընդհատ նորացումից: Հետեւաբար, այս ոլորտին անհրաժեշտ են մեծածավալ ներդրումներ, որոնք առայժմ բացակայում են: Նախ Հայաստանի ներքաղաքական իրավիճակի անկայունությունը, ապա, առավել եւս, ձեռնարկությունների վիճակը, մեղմ ասած, որեւէ ներդնողի համար գրավիչ չէ: Սակայն անգամ եթե կատարվեն ներդրումներ, ապա մեզ մոտ վերջին սերնդի ռադիոէլեկտրոնային սարքավորումներ չեն արտադրվելու: Եվ նույնիսկ այս դեպքում հնարավոր չէ ակնկալել ռադիոէլեկտրոնային արդյունաբերության նախկին խորհրդային ծավալների վերականգնումը, եւ դրա իմաստը, համենայն դեպս այս պահին, չկա, քանզի կորսված շուկաների փոխարեն նոր շուկաներ գտնելը տարիներ կպահանջի: Այնուամենայնիվ միանշանակ է, որ այս 37 ձեռնարկությունները չի կարելի թողնել ներկա վիճակում եւ այս առումով պետական որեւէ ծրագրի գոյության կամ բացակայության մասին տեղեկանալու նպատակով դիմեցինք ՀՀ արդյունաբերության եւ առեւտրի նախարարության ռադիոէլեկտրոնիկայի վարչության պետ Վանիկ Հովսեփյանին: Վերջինս հայտնեց, որ այդ ձեռնարկություններն ընդգրկված են 1998-2000 թթ. սեփականաշնորհման ծրագրում:

Մասնավորեցման ենթակա՝ օբյեկտների ցանկում են այնպիսի հայտնի ձեռնարկություններ, ինչպիսիք են վերեւում հիշատակված «Մարսը», եւ «Տրանզիստորը», «Հայավիահամալիրը», «Արմատը», «Կոնեկտը», Վանաձորի «Էլեկտրոնը», Դիլիջանի «Իմպուլսը», Աբովյանի «Սիրիուսը»: Ընդ որում, մրցույթով սեփականաշնորհվելու են միայն «Տրանզիստորը» եւ «Սիրիուսը»: Եթե առաջինի առնչությամբ դեռեւս նոր է ստեղծվել պետական հանձնաժողով, ապա «Սիրիուսի» 34 տոկոսի պետական բաժնեմասն արդեն վաճառվել է բրիտանական ANOVA ընկերության նախագահ Շանդիբ Պոպատին: Վերջինս պարտավորվել է առաջիկա երկու տարիներին իրականացնել ներդրումային եւ նոր աշխատատեղերի ստեղծման ծրագիր: Սակայն «Սիրիուսը» բացառություն է այս ոլորտում: Դեռեւս անհայտ է մյուս ձեռնարկությունների հետագա ճակատագիրը, քանզի դեռ որոշված չէ դրանց սեփականաշնորհման մեթոդը: Միջազգային մրցույթների միջոցով այդ ձեռնարկությունների սեփականաշնորհման մասին, ըստ Վանիկ Հովսեփյանի, ընդունված որոշումներ գոյություն չունեն: Հետեւաբար, առայժմ ուժի մեջ է սեփականաշնորհման նախկին բաժնետոմսերի ազատ բաժանորդագրության ձեւը, ինչի անարդյունավետությունն արդեն խոստովանում է համապատասխան նախարարության փոխնախարարը: Ինչ մնում է այս ձեռնարկությունների ավելի քան 100 մասնաճյուղերին, որոնք ստեղծվել են հանրապետության գյուղական շրջաններում, ապա դրանց մասնաշենքերը նախատեսվում է հանձնել համայնքներին՝ տարբեր, այդ թվում արտադրական նպատակներով օգտագործելու համար:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ ռադիոէլեկտրոնիկայի բնագավառում մոտ ժամանակներս լուրջ առաջընթաց ակնկալել չենք կարող: Բացի հիշատակված «Սիրիուսից» եւ «Տրանզիստորից», մյուս ձեռնարկությունների ապագան փաստորեն անորոշ է: Այն փաստը, որ մինչեւ այժմ ոչ միայն բացակայում է որեւէ համակարգված մոտեցում պետության կողմից, այլ անգամ, ինչպես նշվեց, որոշված չէ ոլորտի ձեռնարկությունների սեփականաշնորհման եղանակը, ինքնին հանգեցնում է նման եզրակացության:

ԱՐԹՈՒՐ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

## Միջազգային

# Հայ-իրանական հարաբերությունների ինը տարիներն ընդհանուր գծերով

## *Ո՛չ կրոնների, ո՛չ պետական համակարգերի տարբերությունները խոչընդոտ չեն երկկողմ հարաբերությունների խորացմանը*

ԽՍՀՄ փլուզումից հետո Իրանի Իսլամական Հանրապետության հյուսիսային 1.740 կիլոմետրանոց սահմանը բաժանվեց երեք նորանկախ հանրապետությունների՝ Թուրքմենստանի, Ադրբեջանի (Նախիջևանի Ինքնավար Հանրապետության հետ) եւ Հայաստանի միջեւ. մեր երկրին բաժին ընկավ ընդամենը 45 կիլոմետր երկարությամբ սահման, որը շրջափակման ծանր տարիներին մեզ համար արտաքին աշխարհի հետ ցամաքային հաղորդակցության (Հայաստանը սահմանափակվել էր Ադրբեջանի՝ Թուրքիայի եւ անկայուն Վրաստանի միջեւ) միակ հուսալի եւ կենսաբար ճանապարհն էր: Այսօր Հայաստանի, առավել եւս Իրանի համար այդ սահմանը դարձել է ռազմավարական խիստ նշանակություն ունեցող:

Ընդհանրապես, հայ-իրանական հարաբերությունները պետք է բաժանել երկու մասի՝ Հայաստան-Իրան եւ ԼՂՀ-Իրան. պաշտոնական Թեհրանը, ինչպես աշխարհի եւ ոչ մի երկիր, չի ճանաչել ԼՂՀ դե ֆակտո անկախությունը, սակայն Թեհրանը ԼՂ հարցում չափազանց զգայուն է, եւ շատ դեպքերում Հայաստան-Իրան փոխհարաբերությունները պայմանավորված են Լեռնային Ղարաբաղի խնդրով:

ԼՂ հարցում այժմ պահպանվող սպասուս քվոն հնարավորություն է տալիս Թեհրանին խուսանավել Հայաստանի եւ Ադրբեջանի հետ հարաբերություններում, ազդեցություն ունենալ երկու երկրների վրա: Եթե քննարկելու լինենք ԼՂՀ առաջա կարգավիճակի երեք հնարավոր, ավելի ճիշտ, տեսական տարբերակները, կնկատենք. ա) եթե ԼՂ-ն ճանաչվում է Ադրբեջանի անբաժանելի մաս, ամրագրվում ՀՀ իշխանությունների կողմից, ապա նման դեպքում Թեհրանը կորցնում է Բաքվի վրա ճնշելու լծակներից մեկը: բ) ԼՂՀ-ն դե յուրե միանում է Հայաստանին. այս տարբերակը եւս անընդունելի է Թեհրանի համար: Էթնիկապես տարբեր պարսիկները եւ ադրբեջանցիները դավանում են իսլամի շիա ուղղությունը եւ հենց կրոնական գործոնն է սթիպում Իրանին՝ բարոյապես աջակցել Ադրբեջանին. գ) ԼՂՀ-ն հռչակվում է անկախ պետություն, նման կարգավիճակը եւս չի բխում Իրանի անդրկովկասյան հաղարականության շահերից, քանի որ Թեհրանի կարծիքով ի վիճակի է անկախ լինել որեւէ հզոր պետության օժանդակությամբ, հետագայում գերհզոր պետությանը կցորդ դառնալու վտանգով, դառնալու մեր տարածաշրջանի ոստիկանը, ուղղվել տարածաշրջանի երկրների դեմ: Որպես օրինակ բերվում է Իսրայելը:

ԼՂՀ առաջա կարգավիճակի ամենաընդունելի տարբերակը ներկայումս պահպանվող սպասուս քվոն է. այս դեպքում եւ Իրանը, եւ Ռուսաստանը Ադրբեջանին եւ Հայաստանին զգացնել են տալիս տարածաշրջանում իրենց ներկայությունը:

ԼՂ հարցում Իրանը որդեգրել է հետեւյալ սկզբունքը. որպես տարածաշրջանում հզոր մահմեդական պետություն, բարոյապես աջակցում է Ադրբեջանին, մինչդեռ ռազմավարական առումով Հայաստանը եւ Իրանը դաշնակիցներ են: Երբ հայկական ուժերը 1993-94 թթ. ազատագրեցին Ղուբաթլուի, Զանգելանի եւ Ջեբրայիլի շրջանները, որոնք սահմանակից են Իրանին, հայ-իրանական 45 կիլոմետրանոց հատվածը երկարեց: Պանթուրքականության վտանգը սպառնալիք է նաեւ Իրանին, եւ հաշվի առնելով երկրի հյուսիսում բնակվող միլիոնավոր ադրբեջանցիների առկայությունը, հայ-իրանական սահմանի ընդարձակումը բխում է Թեհրանի շահերից: Մեր դարի 30-ական թթ. Իրանի վարչակարգը մեծ սխալ թույլ տվեց՝ Նախիջեւանի հատվածում տարածքներ փոխանակեց Թուրքիայի հետ, թույլ տալով վերջինիս անմիջական ցամաքային սահման ունենալ ցեղակից Ադրբեջանի հետ: Պատմական սխալն ուղղելու նպատակով այսօր Իրանը Նախիջեւանի հետ պահպանում է հատուկ հարաբերություններ. Արաս գետի կամուրջը (Ջուլֆայում) թափանցիկ է, թույլ է տալիս նախիջեւանցիներին անարգել անցնել Իրան, առեւտուր անել: Իրան-Նախիջեւան հարաբերությունները ջերմ են, եւ Թեհրանը չի թաքցնում իր հավակնությունները այս ինքնավար հանրապետության նկատմամբ:

Հայաստան-Իրան փոխհարաբերությունները, ինչպես ցույց տվեց կարգի վերաբերյալ «3+3+2», ուր Իրանի դերը մեծացվում է, մյուս կողմից՝ փոխարտգործնախարար Սարմադիի այցը Հայաստան որոշ չափով փարատեցին այդ կասկածները, թեեւ, ինչպես **«Ազգին»** տեղեկացրին իրազեկ աղբյուրները, Հայաստանի կախվածությունն Արեւմուտքից, այնուամենայնիվ, Իրանում խանդով է ընդունվում: Մասնավորապես, ռազմավարական նշանակություն ունեցող Իրան-Հայաստան գազատարի շինարարությունը, որը ֆինանսավորելու համար աջակցում են Ռուսաստանը, Չինաստանը, Ճապոնիան, Ֆրանսիան, Իրանը, մի շարք բանկեր, ԱՄՆ-ի եւ Համաշխարհային բանկի ճնշման տակ ծգծգվում է:

Իրան-Հայաստան գազատարի կառուցումը, Արաս գետի ջրի օգտագործումը, Քաջարանում թունելի կառուցումը, Մեղրիում ՈԳ հյուրատոսական բաժանմունքի բացումը կարող են շրջառանությունից դուրս բերել Մեղրին Լաչինի հետ փոխանակելու տգնապալի խոսակցությունները:

Հայ-իրանական տնտեսական հարաբերությունները, հաշվի առնելով պոտենցիալ ներուժը, այսօր ցածր մակարդակի վրա են: 1994 թ. տվյալներով, Հայաստանի ամենախոշոր գործընկերների շարքում Իրանը երկրորդ տեղում էր: Ապրանքաշրջանառությունը տարեցտարի նվազեց, որը, սակայն, պայմանավորված էր նաեւ հայկական արտադրատեսակների շուկայում հայտնվելով, որոնք իրենց որակով չեն զիջում պարսկական ապրանքներին:

Մակրոտնտեսական ոլորտում, որպես համաշխարհային քաղաքակրթության օրրաններ, Հայաստանը եւ Իրանը համագործակցում են լուրջ հաջողությամբ: Դա են վկայում երկու երկրներում պարբերաբար կազմակերպվող մշակույթի օրերը, տարբեր միջոցառումները:

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ

# Զբոսաշրջության վտանգավոր գոտիները

**Աշխարհի լրատվամիջոցները շարունակում են անդրադառնալ ապրիլի 23-ի ողբերգական դեպքերին, երբ Ֆիլիպինյան «Աբու-Սայաֆ» իսլամիստական կազմակերպության ահաբեկիչները Մալայզիայի ծովափից առեւանգեցին եւ Ֆիլիպինների Ջոլո կղզի տարան 21 զբոսաշրջիկների, այդ թվում 10 օտարերկրացիների: Թեեւ դրանից հետո նախագահ Էսթրադայի վարկանիշը կտրուկ նվազեց, Ֆիլիպինյան պետն արժեզրկվեց, Ջոլոն վատահամբավ վայր դարձավ, պատանդները դեռ գերության մեջ են:**

Ջոլոյի ողբերգությունը ՁԼՄ-ներին առիթ տվեց վերհիշելու վերջին ամիսներին աշխարհի տարբեր մասերում զբոսաշրջիկների առեւանգումների եւ սպանությունների բազմաթիվ դեպքերը եւ կազմելու առավել վտանգավոր երկրների ցանկեր: Վիճակագրությունը վկայում է, որ չնայած բոլոր վտանգներին, աշխարհում զբոսաշրջիկների թիվը շարունակ աճում է: Այսպես, եթե 20 տարի առաջ արտերկիր մեկնող զբոսաշրջիկների թիվը 300 մլն էր, ապա այսօր նրանց թիվը կրկնապատկվել է շատ են, ըստ որում եվրոպացիները կազմում են բոլոր զբոսաշրջիկների 50 տոկոսը: Կանխատեսումների համաձայն, 20 տարի հետո աշխարհում զբոսաշրջիկների թիվը հասնելու է 1.8 միլիարդի:

Պետությունների ընդհանուր թվի 80 տոկոսը կազմող աղքատ երկրներում զբոսաշրջիկը դիտարկվում է հարուստ անձնավորություն, ուստի հաճախ իդեալական թիրախ է առեւանգման եւ դրամաշորթումների համար: Երբեմն էլ պատանդներին փորձում են օգտագործել ինչ-ինչ քաղաքական նպատակներով:

Տարածված մայնությանը հակառակ, ամբողջաթիրական պետությունները (օրինակ՝ Թունիսը, Լիբիան, Սիրիան) հաճախ ավելի ապահով են օտարերկրացիների համար, քան ժողովրդավարական համարվող որոշ երկրներ (օրինակ՝ Թուրքիան, Կոլումբիան):

Ֆրանսիայի արտգործնախարարությունը կազմել է աշխարհի վտանգավոր շրջանների քարտեզը, որի համաձայն զբոսաշրջիկներին տված անակնկալներ են սպասում առավելապես աֆրիկյան եւ ասիական մի շարք երկրներում: Վտանգավոր պետությունների ու շրջանների ցանկի մեջ են մտնում Չադը, Կոնգոն, Կենտրոնական Աֆրիկայի Հանրապետությունը, Ուգանդան, Ռուանդան, Բուրունդին, Զամբիան, Սոմալին, Էրիթրեան, Եթովպիան, Սիեռա Լեոնեն, Գվինեա-Բիսաուն, Լիբերիան, Նիգերիան, Սենեգալը, Ալժիրը, Թուրքիայի հարավ-արեւելքը, Իրանը, Կովկասը, Աֆղանստանը, Պակիստանը, Հնդկաստանի Քաշմիրի եւ Ասսամի նահանգները, Շրի Լանկայի հյուսիսը, Ֆիլիպինների հարավը: Ամերիկայում վտանգավոր են համարվում Կոլումբիան եւ Հայիթին, Եվրոպայում՝ Ալբանիան, Բոսնիա-Հերցեգովինան եւ Հարավսլավիան:

Հարկ է նշել, որ առեւանգումների գծով առաջատարը Կոլումբիան է, որտեղ 1998 թ. պատանդ է վերցվել 3000 մարդ: Հաջորդ տեղերում են Բրազիլիան (1100), Ֆիլիպինները (425), Ռուսաստանը (237), ԱՄՆ-ը (39), Իտալիան (36), Վենեսուելան (24), եմենը (14) եւ Չինաստանը (9): Ընդհանուր առմամբ աշխարհում տարեկան առեւանգվում է 20 հազար մարդ: Զոհերի մեջ օտարերկրացիների թիվը հասնում է մի քանի հարյուրի (զբոսաշրջիկներ, գործարարներ, մարդասիրական կազմակերպությունների ներկայացուցիչներ): **«Պուեն»** հանդեսի տվյալներով, եթե պատանդների 60 տոկոսն ազատ է արձակվում փրկագնով, ապա նրանց 14 տոկոսը սպանվում է առեւանգիչների կողմից:

Առեւանգումներն աշխարհում լայնորեն տարածված եկամտաբեր գործ են դարձել: Պատահական չէ, որ անգլո-սաքսոնական ապահովագրական խոշոր ընկերություններն (AIG, ACE, Chubb, Lloyd's) ապահովագրեր են առաջարկում արտերկիր մեկնողներին: Ֆրանսիայում նման գործունեությամբ զբաղվում է միայն Axa ընկերությունը:

Պ. Բ.

ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄ

# ԱՄՆ-ը 1958 թ. ծրագրել էր միջուկային պայթեցում Լուսնի վրա

Ինչպես գիտենք, Լուսնի վրա ոտք դրած առաջին մարդն ամերիկացի տիեզերագնաց Նեյլ Արմսթրոնգն էր, որը 1969 թ. հուլիսին այնտեղ հասավ «Ապոլոն» տիեզերանավով: Բայց հայտնի չէ, թե համաշխարհային պատմության այդ խոշոր իրադարձությունն ինչպիսի ընթացք կունենար, եթե դրանից 11 տարի առաջ ամերիկացիներն իրականացրած լինեին իրենց խելահեղ ծրագիրը, որը բացահայտված է անգլիական «Օբսերվեր» հանդեսի վերջին համարում:

Պարզվում է, որ «սառը պատերազմի» ժամանակաշրջանում ամերիկացիներն իրենց նվաստացած զգալով տիեզերական հետազոտությունների ասպարեզում ԽՍՀՄ-ի ձեռք բերած նվաճումներից, մտադրվել էին ահաբեկման նպատակով ուժի ցուցադրություն կատարել եւ մի խելահեղ ծրագրի իրականացման միջոցով ապացուցել ԱՄՆ-ի գերազանցությունը զանգվածային բնաջնջման զենքի բնագավառում:

Ամերիկացի ճարտարագետ Լեոնարդ Ռեֆելը «Օբսերվերի» թղթակցին հայտարարել է, որ ամերիկյան օդուժը Չիկագոյի լաբորատորիաներից մեկին 1958 թ. հանձնարարել է Լուսնի վրա միջուկային պայթեցում նախապատրաստել: Ռեֆելի պնդմամբ այդ դիվային ծրագիրը միանգամայն իրագործելի է եղել եւ արժանացել ԱՄՆ-ի նախագահ Էյզենհաուերի հավանությանը: Նախատեսվում էր երկրից միջուկային հրթիռ արձակել դեպի Լուսնի խառնարաններից մեկը: Այդ ցուցադրական գործողության նպատակն էր Լուսնի վրա առաջացնել միջուկային պայթյունի վիթխարի սնկաձեւ ամպ, որը տեսանելի կլիներ երկրից:

Այսօրվա պատկերացումներով այդ գաղափարը կարող է անմիտ կատակի տպավորություն գործել: Բայց դժվար է դա կատակ համարել, եթե նկատի ունենանք, որ Պենտագոնը մինչեւ օրս չի հերքել «Օբսերվերի» հրապարակումը: Մարդկությունը հերթական աղետից փրկվել է լոկ այն պատճառով, որ ամերիկացիներն ի վերջո հրաժարվել են իրենց խելահեղ մտադրությունից, այն փոխարինելով Լուսինը նվաճելու՝ նախագահ Ջոն Քենեդու մարտահրավերով:

Ֆրանսիական «Պուեն» շաբաթահանդեսը գրում է, որ այս պատմությունը հատկանշական է ամերիկացիների համար, որոնք հաճախ անմիտ քայլերի են դիմում, քանի որ լիովին չեն գիտակցում իրենց ամենագորության նյութական ու հոգեբանական կործանարար հետեւանքները:

Նույնը կարելի է ասել նախագահ Ռոնալդ Ռեյգանի «աստղային պատերազմների» ծրագրի մասին, որը վերանայվել եւ արբագրվել է ներկայիս նախագահ Բիլ Քլինթոնի կողմից: Խոսքը հակահրթիռային պաշտպանության վահանի մասին է, որն ԱՄՆ-ին իբր պաշտպանելու է ԿԺԴՀ-ի կամ Իրանի հարձակումից: Ամերիկացիների այս ծրագիրը ոչ միայն կստիպի վերանայել նախկին ԽՍՀՄ-ի հետ կնքած զինաթափման պայմանագրերը, այլեւ որոշակի ազդեցություն կունենա համաշխարհային զարգացումների վրա: Նույնիսկ նախկին նախագահ Ջիմի Քարտերի խորհրդական Զբիգնեւ Բժեզինսկին է քննադատում ԱՄՆ-ի հակահրթռային պաշտպանության ծրագիրը, որն «Ամերիկան կդարձնի գետնի (առանձնաթաղ), որտեղ հարուստներն արհեստական հանգստության պայմաններում կապրեն իրենց բարձր պարիսպների եւ մասնավոր ոստիկանության հովանու ներքո»:

ԱԶԳ

# Մշակույթ

## Բայրոնյան հրաշք աշխարհում

Ինչպես հաղորդել ենք, երկուշաբթի օրը Երեւանի պետական համալսարանի Չարենցի անվան դահլիճում (բանասիրական ֆակուլտետ) բացվեց «Բայրոն: Աստեղծված եւ իրականություն» ընդհանուր խորագրով գիտաժողովը՝ կազմակերպված Հայաստանի բայրոնյան ընկերության եւ ՀՊՀ միացյալ արհկոմիտեի կողմից: Բայրոնյան ընկերության հայկական ընկերության մասնաճյուղը հիմնադրվել է 1991 թ. պետհամալսարանում՝ լոնդոնյան բայրոնյան անդամ իրանահայ Օդեթ Բազիլի նախաձեռնությամբ եւ պետհամալսարանից գործին նվիրված էնտուզիաստների՝ Լիլյանա Էդիլյանի, Սաթենիկ Աբրահամյանի եւ Զարինե Մխիթարյանի կազմակերպությամբ: Նպատակն է ուսումնասիրել Բայրոնի գրական ժառանգությունը եւ այն մատչելի դարձնել հասարակությանը, ինչպես նաեւ կազմակերպել սեմինարներ, ընթերցումներ, գիտաժողովներ եւ կարեր հասցնել բայրոնյան այլ ընկերությունների հետ:

Երկուշաբթի օրվա գլխավոր զեկուցողն Անգլիայից հատկապես այս առիթով ժամանած Փիթեր Քոքրանն էր, որը, հիմնականում անդրադառնալով Բայրոնի հավատի բարդ խնդրին, մանրամասնորեն ներկայացրեց «Երկինք ու երկիր» պիեսը: Պիեսը գլխավորապես բարու եւ չարի, հավատն ընդունել-չընդունելու պրոբլեմին է անդրադառնում, եւ, ըստ զեկուցողի, գործողությունները տեղի են ունենում Հայաստան աշխարհում, որը Բայրոնի բնութագրմամբ դրախտն է: Խորհրդանշական է, որ ոչ մի երկրում, ոչ մի լեզվով մինչեւ օրս չներկայացված այս պիեսն առաջին անգամ (ճիշտ է, ամբողջ պիեսի մոտ մեկ երրորդը միայն) այդ օրը ներկայացվեց Հայաստանի պետական համալսարանում անգլերեն լեզվով: Այդ բարդ պարտականությունը կարճ ժամկետում իրականացնելը իր վրա էր վերցրել համալսարանի վաստակավոր դասախոսներից Սվետլանա Վարդանյանը: Պիեսում ընդգրկված էին հիմնականում առաջին կուրսի ուսանողները:

Երկրորդ օրվա ծրագրի շրջանակներում զեկուցումներ կարդացին Անահիտ Բեթարյանը («Բայրոնի հայկական նամակները»), Վրեժ Ստեփանյանը (Բայրոնի առնչությունները երկու տուբադուրների՝ Ռոբերտ Բլոնսի եւ Սայաթ Նովայի հետ), Նանե Սոլախյանը («Բայրոնը որպես դրամատուրգ»), Զարինե Մխիթարյանը («Եբրայական մեղեդիները»), Մարլեն Պողոսյանը («Նախնական գիտելիքի եւ ուղղահայաց կոնթարգմանական բաժնի ուսանողներից Իզաբելա Հայրունին ներկայացրեց Օգոստային եւ Մերիենին, Տաթեւիկ Վարդանյանը՝ Անաբելային, Գոհար Մադոյանը՝ Քերոլին Լենին:

Գիտաժողովը հրաշալի հնարավորություն տվեց տաղանդներով լի մեր առօրյայից փոխադրվել ճնարական արվեստի հրաշք աշխարհը եւ դրա համար մեծապես գովեստի ու շնորհավորանքի արժանի են կազմկոմիտեի անդամներ Լիլյանա Էդիլյանը, Սաթենիկ Աբրահամյանը, Զարինե Մխիթարյանը, ինչպես նաեւ պիեսի բեմադրությունը նախապատրաստող Սվետլանա Վարդանյանը:

Շնորհակալություն գեղեցիկ ժամերի համար:

Հ. Ծ.

ՀՈՒՆԻՍԻ 1-Ը ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է

## Մանկանամե

Հունիսի մեկը երեխաների պաշտպանության միջազգային օրն է: Պաշտպանում են ումի՞ց կամ ինչի՞ց... անշուշտ, վայրի գազաններից ու վատ եղանակից: Բայց եւ այնպես, անչափահասների հանցագործությունների աճն այնպիսի մակարդակի է հասել, որ հրամայական պահանջ է զգացվում, որպեսզի հոչակվի երեխաներից պաշտպանության միջազգային օր: Քաղաքական գործիչներին կարելի է շատ բան ներել, որովհետեւ նրանք երեխա են ծնվել: Եվ ի՞նչ զարմանալու է, որ մինչեւ վերջ պահպանում են քաղաքական ինֆանտիլիզմը: Հետեւելով «Յետս տակայա պարտիա» լենինյան կուրսին հայկական մաֆիան այս մանկասիրական օրվա առթիվ մանկական կոշիկների մի մեծ պարտիա է նվիրել որբանոցներին:

Պաշտպանության նախարարությունը որոշել է, որ հունիսի 1-ին զորակոչիկներին թույլ տա, որ ծառոն ծամեն, որպեսզի հագուրդ տան իրենց մանկության կարոտին:

- Մեծերն ինչո՞ւ են կարոտում իրենց մանկությունը,- հարցնում է Այծեմնիկը:

- Որովհետեւ այն ժամանակ մենք դեռ չկայինք,- պատասխանում է Բենիկը:

- Մենք ինչո՞ւ ենք ծնվել,- հարցնում է Այծեմնիկը:

- Պարզ չէ՞...- պատասխանում է Բենիկը,- որպեսզի տոնենք մեր ծննդյան տարեդարձը:

Հունիսի 1-ին թատերային հրապարակում հայտարարվում է հավաք «Երեխաներ բոլոր մարզերից, միացեք» նշանաբանով: Հավաքի նպատակն է անչափահաս թեկնածուներ առաջարկել ԱԺ-ում պատգամավոր ընտրվելու համար:

Երեխաների միջազգային պաշտպանության կազմակերպությամբ լույս չի տեսնելու «Կանչ» ազգային շաբաթաթերթը: Այդ բացը լրացնելու համար հարեւան հանրապետություններից ներմուծվելու են մանկական պարբերականներ:

ՎԱԲՈՒՇԻՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ԳԻՆԵՑՈՒ

## Բանաստեղծուհու նոր գրքերը

Երեկ Թեթեյան կենտրոնում տեղի ունեցավ Միլվա Կապուտիկյանի երկու նոր գրքերի շնորհանդեսը: Բանաստեղծական «Ընտանի» եւ «Չեմ կարող լռել» հրապարակախոսական ժողովածուներն, անշուշտ, նոր խոսք են ոչ միայն բանաստեղծուհու ստեղծագործական կյանքում, այլեւ հայ գրականության համար ընդհանրապես:

Շնորհանդեսի ժամանակ բարեմաղթանքների շատ խոսքեր եղան, կարծիքներ հնչեցին: Այս մասին սպառիչ տեղեկատվություն կներկայացնենք «Ազգի» հաջորդ համարում:

ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

## ՀՖՆ-ն՝ լավագույն նվագախումբ

Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախումբը, ճանաչվելով 99 թվականի լավագույն նվագախումբ, ստացել է ճապոնական դրամաշնորհ: «Միցուբիշի» ֆիրմայի սահմանած դրամաշնորհի չափը կազմում է 500 հազար ամերիկյան դոլար: Գումարի փոխարեն նվագախումբը ստացել է նույն արժողությամբ երաժշտական գործիքներ եւ ձայնագրման ստուդիա: Երաժիշտների հավաստմամբ, այդ ստուդիան իր հնարավորություններով եզակի է ամբողջ Անդրկովկասում:

Ճապոնական ֆիլմերի փառատոնին մասնակցելու համար Մոսկվայից ժամանած ճապոնիայի դեսպան Սինորու Տամբան, օգտվելով Հայաստանում գտնվելու հնարավորությունից, հանդիպեց նվագախմբի անդամներին: Հատուկ նրա համար կազմակերպված համերգային ծրագրից հետո դեսպանն ասաց. «Ես գիտեմ, որ Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախումբը տարիներ շարունակ հայտնի է եղել: Բայց այսօր առաջին անգամ լսեցի նրա հրաշալի կատարումները»: Թե հայկական եւ թե ճապոնական կողմերն արդեն այսօր ցանկություն ունեն շարունակել երկկողմ համագործակցությունը:

ԷԴԳԱՐ ԲԱԴԱԼՅԱՆ

## Հայաստանից մասնակցեց Հրաչյա Սարուխանը

Օրերս Ուկրաինայում ավարտվեց մեկ շաբաթ տեւած «Ընտանիում ազատ եւ նոր» ամենամյա միջազգային տոնը՝ նվիրված բանաստեղծ եւ նկարիչ Տարաս Շեւչենկոյի հիշատակին: Տոնին հրավիրված էին մտավորականներ, արվեստագետներ Ավստրալիայից, Շվեդիայից, Անգլիայից, Սլովակիայից, Բուլղարիայից, Գերմանիայից եւ այլ երկրներից, նաեւ ԱՊՀ մի շարք հանրապետություններից: Հայաստանից հրավիրված էր բանաստեղծ, թարգմանիչ Հրաչյա Սարուխանը: Ընթերցողներին հիշեցնենք, որ նա հայերեն մեծարժեք թարգմանություններ է կատարել Շեւչենկոյի ստեղծագործություններից: Իսկ Ուկրաինայի գրողների ազգային միության հրավերը բանաստեղծին էր հանձնել Հայաստանում Ուկրաինայի դեսպան Ա. Բոժկոն: Հանդիպումներ են տեղի ունեցել Կիեւում, Կանում, Խմելնիցկում եւ այլ քաղաքներում:

«Ցանկալի կլիներ, որպեսզի նման շեղ հանդիպումները տոնվեին նաեւ մեր ազգային մեծերի պատվին՝ Թումանյանի, Իսահակյանի... Մեզանում, ցավոք, միջոցառումներ են տեղի ունենում միայն հոբելյանից հոբելյան», «Ազգի» թղթակցին ասաց Հրաչյա Սարուխանը:

ՄԱՆՎԵԼ ՄԻՔՈՅԱՆ
Վանաձոր

## Շիրակի հայագիտական կենտրոնը գործում է

Շիրակի պատմագավառի հեռու ու մոտիկ անցյալի, հազարամյակների ծնունդ նյութական ու հոգեւոր մշակույթի հուշարձանների ուսումնասիրությունը վերջին տարիներին, չնայած առկա դժվարություններին, բավականին աշխուժացել է: Հայտնաբերվել ու պեղվում են նոր արժեքավոր հնավայրեր, կատարվում հնագիտական, պատմագիտական, ազգագրական, էթնոսոցիոլոգիական եւ էթնոհոգեբանական, բանագիտական եւ այլ հետազոտություններ ինչպես հանրապետության, այնպես էլ տեղի մասնագետների կողմից: Ուսումնասիրությունների արդյունքները ներկայացվում են տպագրվող գիտական հոդվածների, ժողովածուների ու այլ հրատարակությունների, նաեւ միջազգային ցուցահանդեսների միջոցով, Շիրակի պատմամշակութային ժառանգությանը նվիրված արդեն ավանդական դարձած հանրապետական գիտաժողովներում:

Այս աշխատանքները կենտրոնացնելու եւ համակարգելու, տեղի գիտական միտքը խթանելու նպատակով 1997 թ. աշնանից Գյումրիում ստեղծվել եւ գործում է ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի մասնաճյուղ՝ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնը: Նրա աշխատանքում ընդգրկված են հայագիտության տարբեր բնագավառներ ներկայացնող տեղացի առաջատար եւ երիտասարդ մասնագետներ գիտական կարեւոր օջախ հանդիսացող Շիրակի երկրագիտական թանգարանից, «Կումայրի» պատմաճարտարապետական արգելոց-թանգարանից, Գյումրիի պետական մանկավարժական ինստիտուտից: Ստեղծման արդեն հաջորդ տարում նորաբաց կենտրոնն ինքը նախաձեռնեց եւ մասնակիցների կողմից նշված գիտական ու կազմակերպական բարձր մակարդակով անցկացրեց Շիրակի պատմամշակութային ժառանգությանը նվիրված հերթական՝ թվով երրորդ հանրապետական գիտաժողովը Գյումրիում: Ի դեպ, չորրորդ նման հանդիպումն անցկացվելու է այս տարվա աշնանը: Երրորդ գիտաժողովի օրերին լույս տեսավ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ» անդրանիկ ժողովածուն, իսկ մինչեւ այժմ հրատարակվել է նաեւ երկրորդը: Անցյալ տարի այստեղ ֆինանսավորվել են 5 գիտական թեմաներ, իսկ այս տարի պետական ֆինանսավորման է ներկայացվել եւս 3 նոր թեմա: Կենտրոնում պարբերաբար կազմակերպվում են զեկուցումներ, սեմինարներ, գիտական քննարկումներ նաեւ հանրապետության անվանի հայագետների մասնակցությամբ:

Հայագիտական կենտրոնի այս տարին որոշվել է նվիրել Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելու 1700-ամյակին: Կհատակեցվեն հայագիտական հետազոտությունների հիմնական ուղղությունները 21-րդ դարասկզբին: Անցկացվելիք երկու գիտաժողովներից մեկը նվիրված կլինի Ղեւոնդ Ալիշանի 180-ամյակին: Վերականգնվում է եւ շուտով ներկայացմամբ հանդես կգա նախկինում Շիրակում հայտնի «Ստվերների թատրոնը»:

ԳԵՂԱՄ ՄԱՐՏՈՅԱՆ
Գյումրի

ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ

## Աղքատությունը եւ ժողովրդավարությունը ծաղրանկարներում

Մարդու իրավունքների եւ ժողովրդավարության ինստիտուտ՝ Միժի հասարակական կազմակերպությունը մայիսի 25-31-ը կազմակերպել էր «Աղքատությունը եւ ժողովրդավարությունը Հայաստանում» թեմայով ծաղրանկարների մրցույթ-ցուցահանդես: Ներկայացված նկարների համար սահմանված են մրցանակներ՝ առաջին մրցանակ՝ 105000 դրամ, երկրորդ մրցանակ՝ 52500 դրամ, երրորդ մրցանակ՝ 26250 դրամ: Ցուցահանդեսի կազմակերպիչների նպատակն է երգիծական արվեստի միջոցով զրուցել Հայաստանում տարվող ժողովրդավարության գործընթացի եւ սոցիալական խնդիրների շուրջ: Մրցույթի արդյունքների օբյեկտիվ ամփոփման համար նկարիչների անունների փոխարեն նկարները համարակալված են, բայց անգամ այս դեպքում այլից չեն վրիպում պրոֆեսիոնալ ծաղրանկարիչները՝ իրականության ճշգրիտ արտացոլմամբ: Չնայած մրցույթում ներկայացված ոչ բոլոր նկարներն են գեղարվեստական արժեք ներկայացնում, բայց երգիծանքի սիրահարների ուշադրությունից չէին կարող վրիպել 47 եւ 49 համարների ծաղրանկարները, որոնց մասին տիպիկ կինչեր Վեյսի աֆորիզմը. «Հումորը լրջություն է՝ թաքնված կատակի ետեւում»: Այս երկու ծաղրանկարներն իրենց մեջ ամփոփել են թեմայի ամբողջությունը՝ աղքատություն, ժողովրդավարություն, այս ամենն արվել է հնարամիտ ձեռքով ու սուր դիտողականությամբ: Նկարներից մեկում հաջող դիմանկարների միջոցով տրված է ժողովրդավարության գործընթացը Հայաստանում: Մյուս նկարն ավելի նեղ սյուժե է ընդգրկում՝ սոցիալական անհավասարություն եւ մարդկային «սովորական» կյանքը: Այստեղ ծաղրանկարիչը հասել է լեզվական նորարարության: Ուշագրավ է մյուս նկարը, պատկերված է համատարած աղքատության վրա դոլարի իշխանությունը: Մարդկային կերպար հանդիսացող դոլարի միջոցով արտահայտված է նաեւ մեր իրականության արեւմտամետ կողմնորոշումը: Պակաս հետաքրքիր չէր 20 համարի նկարը: Պատկերված էր մեր իրականության ողջ գորշությունը եւ այդ գորշությունից ծնված հայ ազգի այսօրվա տեսակը:

Մրցույթի արդյունքներն ամփոփվեցին մայիսի 31-ին: Որպես ժողովրդավարության ինստիտուտ՝ մրցույթի կազմակերպիչները վերջնական ամփոփման համար մեծ մասամբ հաշվի են առնելու այցելուների գնահատականները: Բայց ցանի որ, ըստ մեզ հասած տեղեկությունների, նկարիչները գիտեն իրենց նկարների համարները, ապա ամփոփման այս մեխանիզմն անսխալ չի կարող լինել: Դրացի-ընկերների օգնությամբ կարելի էր ապահովել այցելուների գնահատականների մեծ մասը: Մնում է հուսալ, որ ժյուրիի կազմում ընդգրկված միակ արվեստագետը ծաղրանկարների գիտակ կլինի:

ԷԼՄԻՐԱ ԲԱԴԱԼԱՐՅԱՆ

## «Նաիրի» կ/թ-ը կբացի՞ իր դռները

Վերջապես իշխանությունները հիշել են «Նաիրի» կինոթատրոնի գոյության մասին: Ավելի քան 2 տարի կ/թ-ի դռները փակ են հանդիսատեսի առջեւ: Այսօր քաղաքացին որոշել է անձամբ զբաղվել այդ խնդրով եւ դռները բացել երեւանցիների առջեւ... Այդ նպատակով ստեղծվում է հանձնաժողով՝ մշակույթի վարչության պետ Արտավազդ Թորոսյանի գլխավորությամբ, որը կզբաղվի «Նաիրին» վարձակալության տալու գործով: Ըստ վարչության պետի, կհայտարարվի մրցույթ, որին կարող են մասնակցել բոլոր ցանկացողները, կինոթատրոնի նախկին տերը եւ նույնիսկ միջազգային կազմակերպություններ: Ի դեպ, UNESCO-ն արդեն իսկ հետաքրքրվում է այս հարցով: Հանձնաժողովը կթելադրի վարձակալության իր պայմանները, որոնցից թերեւս ամենակարեւորն այն է, որ «Նաիրին» պահպանի կինոթատրոնի իր կարգավիճակը: Այնպես որ, երեւանցիները շուտով կունենան ժամանակակից տեխնիկայով կինոթատրոն, հասստատում է քաղաքապետը: Մնում է լուծել կինոտարածության խնդիրը, որպեսզի հայկական կինոթատրոնում միայն արտասահմանյան տեսաֆիլմեր չցուցադրվեն:

ՆՆԻ ԳԻԼՈՅԱՆ

ԱԶԳ

# Մարզական

ԱՍՈՒԼԻՍ

## Սիդնեյում Սիդնեյի օլիմպիադան է

ՀՀ սպորտվարչությունում անցկացվեց մամուլի ասուլիս, որի հիմնական թեման առաջիկա օլիմպիադան էր: Սակայն բավականին խոսվեց հայկական սպորտի ընդհանուր վիճակի մասին, կարեւորվեցին մարզաբազաների, մարզադպրոցների, ընդհանուր առմամբ գործի կազմակերպման խնդիրները:

Իր խոսքում ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի փոխնախարար Իշխան Զաքարյանը խիստ կարեւորեց մարզադպրոցների մեծ մասը կրթության եւ գիտության նախարարության ենթակայությունից իրենց նախարարությանն անցնելու փաստը: Նա նշեց, որ անցած ամիսների ընթացքում բոլորը համոզվել են, որ ճիշտ որոշում է կայացվել: Ոչ մի մարզադպրոց, ոչ մի խումբ չի փակվել, ոչ մի մարզիչ չի կրճատվել: Դրա փոխարեն երեք նոր մարզադպրոցներ են բացվել (Գյումրիում՝ սուսերամարտի, Երեւանում՝ լողի, թիավարության): Մայրաքաղաքում միացվել են շախմատի երկու մարզադպրոցները, Գյումրիում առաջիկայում նույնպես երկու մարզադպրոցներ կմիանան: Մարզադպրոցների կարգավիճակը փոխելուց հետո շատ հարցեր կարգավորվել են: Մասնավորապես, զգալիորեն (4-5, որոշ դեպքերում՝ 7-8 անգամ) բարձրացել է մարզիչների աշխատավարձը: Փոխնախարարը շատ կարեւոր համարեց սպորտի զարգացումը մարզերում: Նա ասաց, որ կազմվել է գրաֆիկ, եւ հանձնախումբն այցելություններ կկատարի տարբեր մարզեր: Կտրվեն հանձնարարականներ, որոնք կօգնեն տեղերում տարվող աշխատանքներին:

Պրն Զաքարյանը նշեց, որ մշակվել է ֆիզկուլտուրայի եւ սպորտի զարգացման հայեցակարգ, եւ դրան խորհրդակցվում՝ օրենքի նախագիծ: Վերջինս մի քանի ամիս քննարկվել է կրթության եւ գիտության նախարարությունում, մարզական ընկերություններում, ֆիզկուլտուրայի ինստիտուտում, այլ կազմակերպություններում: Հաշվի են առնվել բազմաթիվ առաջարկներ, Ամ-ի համաձայնությամբ հանձնաժողովում այն արժանացել է հավանության: Իրոք լավ փաստաթուղթ է ստացվել:

Կարելի է հուսալ, որ շուտով սպորտի մասին օրենք կունենանք, ինչը շատ անհրաժեշտ է: Շատ կարեւոր է, որպեսզի ճշգրտվեն բոլորի իրավունքները՝ սկսած նախարարությունից, վերջացրած մարզադպրոցներով: Պետք է գտնվեն ֆիզկուլտուրայի եւ սպորտի զարգացման հայեցակարգի իրականացման լավագույն ուղիները, որպեսզի երաշխավորեն նաեւ պետական օգնության, աջակցության ծեւերը: Առաջավոր երկրների մարզաձեւերի ֆեդերացիաներն ու ակումբները կարողանում են պահել իրենց, մենք դրան պետք է հասնենք ամենաարագ ժամկետներում:

Խոսելով Սիդնեյում կայանալիք օլիմպիական խաղերի նախապատրաստական աշխատանքների մասին Իշխան Զաքարյանն ասաց, որ նախապատրաստության ընթացքը սկսվել է անցյալ տարվա նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներից: Եղան ֆինանսական խնդիրներ, բայց Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեն ձեռք մեկնեց: Անցկացվեցին բոլոր նախատեսված ուսումնամարզական հավաքները: Այնպես որ հարցերը լուծված են լիովին: Պարբերաբար հանդիպումներ են անցկացվում առանձին ծեւերի մարզական խորհուրդների հետ, ճշգրտվում են մինչեւ օլիմպիադան մնացած ժամանակում կատարվելիք աշխատանքները: Պրն Զաքարյանը նշեց նաեւ մարզաձեւերին հատկացված գումարների չափը: Մենք էլ ներկայացնենք այդ գումարները դրամով: Այսպես, հունահռոմեական ոճի ըմբշամարտ՝ 43 մլն, ազատ ոճի ըմբշամարտ՝ 42 մլն, բռնցքամարտ՝ 26 մլն, ծանրամարտ՝ 23 մլն, թիավարություն՝ 27 մլն, հրաձգություն՝ 13 մլն, թեթեւատլետիկա՝ 4 մլն, ջրացատկ՝ 3 մլն դրամ: Բացի այդ, 75 մլն դրամ փոխանցվել է ՀԱՕԿ-ին: Իհարկե, ծախսերը վերոնշյալով չեն ավարտվում: Փոխնախարարն ասաց նաեւ, որ Սիդնեյում հաջողության հասած հայաստանցի մարզիկներին, մարզիչներին պարգեւավճարներ են տրվում: Օլիմպիական չեմպիոնը կստանա 20 մլն դրամ: Նրա անձնական մարզչին կտրվի 9, հավաքականի մարզչին՝ 11 մլն դրամ: Օլիմպիական խաղերի երկրորդ մրցանակակիրը կպարգեւատրվի 15 մլն, երրորդ մրցանակակիրը՝ 10 մլն դրամով:

Ասուլիսի բոլոր մասնակիցները՝ սպորտվարչության պետ Արմեն Գրիգորյանը, ծանրամարտի ֆեդերացիայի նախագահ եւ հավաքականի գլխավոր մարզիչ Օգսեն Միրզոյանը, մարզաձեւի պետական մարզիչ Փաշիկ Ալավերդյանը, թեթեւատլետիկայի ֆեդերացիայի նախագահ Սարգիս Խաչատրյանը, հունահռոմեական ոճի ըմբշամարտի հավաքականի գլխավոր մարզիչ Լեւոն Ջուլֆալակյանը, ազատ ոճի ըմբշամարտի պետական մարզիչ Օլեգ Աղյանը, բռնցքամարտի պետական մարզիչ՝ Լեւոն Հովհաննիսյանը, պատասխանելով լրագրողների հարցերին, ասացին, որ Սիդնեյի օլիմպիադայի նախապատրաստական աշխատանքները նորմալ են ընթանում: Բոլոր հարցերը, խնդիրները լուծվում են ամենակարճ ժամկետներում:

Խոսելով օլիմպիական ակնկալիքների մասին բոլոր մասնագետներն էլ հույս հայտնեցին, որ Հայաստանի ներկայացուցիչները պատրաստ են պայքար մղել պարգեւների համար: Իհարկե, օլիմպիական պատվո պատվանդան տանող ճանապարհը շատ դժվարին է, բայց մենք էլ հուսանք, որ մեր մարզիկներն անմասն չեն մնա խաղարկվող մեդալներից:

## Նավրատիլովայի վերադարձը

ՌՈՅԹԵՐՍ-ԱՖՊՆԳԵՍ

**Ֆրանսիայում հորդ անձրեւներ են սկսվել: Եվ դա է պատճառը, որ «Ռոլան Գարոս» մրցաշարի երկրորդ օրը ոչ մի խաղ չանցկացվեց:**

Փարիզում պատրաստվում է հանդես գալ նաեւ Մարտինա Նավրատիլովան:

Դարի մեծագույն թենիսիստուհի հռչակված Նավրատիլովան, որն այժմ 43 տարեկան է, մոտավորապես 5,5 տարի առաջ դադարեց մրցումների մասնակցելուց, եւ, իհարկե, բոլորին զարմացրել է նրա վերադարձը: Ճիշտ է, նա հանդես է գալու միայն զուգախաղերում, որտեղ կընկերակցի հարավաֆրիկուհի Մարիան դե Շվարդտին:

Չեխ թենիսիստուհին (նա արդեն երկար տարիներ բնակվում է ԱՄՆ-ում) իր հարուստ մարզական կենսագրության ընթացքում բազմաթիվ հաղթանակներ է տարել: Նա մենախաղերում շահել է 167 մրցաշար, զուգախաղերում՝ 165: Սրանք բացարձակ ռեկորդներ են: Հենց միայն «Ուիմբլդոնում» Նավրատիլովան հաղթել է 19 անգամ (9 անգամ՝ մենախաղերում, 10 անգամ՝ զուգախաղերում):

Վետերանի վերադարձն այնքան էլ հաջող չէր: «Ռոլան Գարոսին» նախորդած Մադրիդի մրցաշարում Նավրատիլովա-դե Շվարդտ զույգը երկրորդ շրջանից հետո դուրս մնաց պայքարից: Նախատեսվում է, որ զույգը հանդես կգա նաեւ Իսբորոնում եւ «Ուիմբլդոնում»:

Խոսելով իր սիրելի մարզաձեւի զարգացման մասին՝ Նավրատիլովան նշում է, որ այն առաջադիմել է, եւ ժամանակակից թենիսիստուհիներն ավելի ուժեղ են:

ՖՈՒՏԲՈԼ

## Մաթեուսի հրաժեշտի խաղը

ՌՈՅԹԵՐՍ-ԱՖՊՆԳԵՍ

Մյունխենի օլիմպիական մարզադաշտում անցկացվեց լեգենդար ֆուտբոլիստ Լոթար Մաթեուսի հրաժեշտի խաղը: Մաթեուսը, որի 39-ամյակը լրացավ 10 օր առաջ, երկար տարիներ հանդես է եկել «Բավարիայում» ու Գերմանիայի հավաքականում: Հենց նրանց միջեւ էլ անցկացվեց ընկերական հանդիպումը: Ընդ որում, Մաթեուսն առաջին խաղակեսում հանդես եկավ հավաքականի, երկրորդում՝ «Բավարիայի» կազմում:

Մյունխենն էին ժամանել մեծ թվով պատվավոր հյուրեր՝ մարզիչներ, ֆուտբոլիստներ: «Բավարիայի» կազմում մեկ խաղակես անցկացրեց Մաթեուսի ընկերն ու հատակակիցը, նույնպես լեգենդար ֆուտբոլիստ, արգենտինացի Դիեգո Մարադոնան, որն այդ իրադարձության կապակցությամբ ընդհատել էր իր բուժումը Կուբայում: Նույնպես «Բավարիայի» կազմում մոտավորապես 30 րոպե խաղաց հանրահայտ Յոհան Քրյոյֆը:

Ընկերական խաղը ոչ-ոքի՝ 1-1 հաշվով ավարտվեց: Գոլերը խփեցին Յանկերը («Բավարիա», 9՝) եւ Հյուլերը (հավաքական, 26՝):

## Մրցում են հավաքականները

Այս օրերին հավաքականների մակարդակով մի շարք ընկերական հանդիպումներ տեղի ունեցան, որոնցից առանձնացնենք հետեւյալները.

**Անգլիա-Բրազիլիա՝ 1-1**: Մեծ հետաքրքրություն էր առաջացրել Լոնդոնի «Ուեմբլի» մարզադաշտում անցկացված այս խաղը: Անգլիայի հավաքականի գլխավոր մարզիչ Քեւին Քիգանին այն հնարավորություն տվեց եվրոպայի առաջնությունից առաջ որոշակի դարձնել իր թիմի մեկնարկային կազմը: Դաշտի տերերը բավականին լավ խաղ ցույց տվեցին, հատկապես՝ առաջին կեսում: Հանդիպման 39-րդ րոպեին անգլիացի Մայքլ Օուենը շեշտակի հարվածով բացեց հաշիվը: Առաջին խաղակեսի վերջին րոպեին անկյունայինի խաղարկումից հետո Բրազիլիայի հավաքականի նորեկ Ֆրանկան խփեց պատասխան գոլը:

Նշենք, որ աշխարհի քառակի չեմպիոնները մի քանի օր առաջ 3-0 հաշվով հաղթել էին Ուելսի հավաքականին: Գոլերը խփել էին էլբերը, կաֆուն, Ռիվալդոն:

**Հոլանդիա-Ռումինիա՝ 2-1**: Փիծակագիրները նշում են, որ սա Ֆրանկ Ռիյկարդի գլխավորությամբ Հոլանդիայի հավաքականի 16-րդ մրցախաղն էր եւ ընդամենը 3-րդ հաղթանակը: 43-րդ րոպեին այրի ընկավ Մարկ Օվերմարսը, իսկ 68-րդին՝ Պատրիկ Կլույվերտը: Ընդամենը 2 րոպե անց Վիորել Մոլդովանը կրճատեց հաշվի տարբերությունը: Ընդ որում, այդ դրվագում հիանալի խաղաց ռումինացի վետերան Գեորգի Հաջին:

**Խորվաթիա-Ֆրանսիա՝ 0-2**: Աշխարհի չեմպիոնները՝ ֆրանսիացիները բավականին լավ խաղ ցուցադրեցին Զագրեբում անցկացված այս հանդիպման ժամանակ: Ռոբեր Պիրեսի եւ Դավիդ Տրեզեգեի դիպուկ հարվածների շնորհիվ հասնելով 2 գնդակի առավելության՝ հյուրերը կարողացան գործը հաղթական ավարտի հասցնել:

**Նորվեգիա-Սլովակիա՝ 2-0**: Մեզ ամենից ավելի այս հանդիպումն էր հետաքրքրում, քանի որ Նորվեգիայի հավաքականը աշխարհի առաջնության ընտրական խաղերում Հայաստանի հավաքականի մրցակիցն է: Խաղն ընթացավ դաշտի տերերի զգալի առավելությամբ: Առաջին խաղակեսի միջնամասում Ուլե-Գունար Սուլշերը 11 մ տուգանային հարվածով խփեց առաջին գոլը, իսկ խաղավարտին Ստեֆեն Իվերսենը կրկնապատկեց հաշիվը:

Շաբաթ օրը նորվեգացիները եւս մեկ հանդիպում կանցկացնեն Օսլոյում: Այդ անգամ նրանց մրցակիցը կլինի Իտալիայի հավաքականը:

## «Գալաթասարայ» արժե 4 միլիարդանոց եւ 22 դոլարոց

ՄՈՍԿՎԱ, 31 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Թուրքական մամուլը խստորեն քննադատել է այն առաջարկը, թե Թուրքիայի կառավարությունը պետք է տուրք 35 միլիոն դոլարի նոյաս տրամադրի այս տարվա ՈՒԵՖԱ-ի գավաթը նվաճած «Գալաթասարայ» թիմին: Առաջարկը խորհրդարանին ներկայացվել է այն պատճառաբանությամբ, թե ակումբը դրական դեր է խաղում Թուրքիայի վարկը բարձրացնելու համար (ըստ երեւույթին երկու անգլիացի հանդիսատեսներ սպանելու «պատվաբեր» արարքը մաս է կազմում Անկարայի վարկը բարելավելու աշխատանքներին: «Ռոյթեր»-ի հաղորդմամբ, թուրք լրագրողները շեշտում են, թե պրոֆեսիոնալ ակումբը չպետք է նման օժանդակություն ստանա՝ ավելացնելով, թե այդ գումարով կարելի է չորս պետական հիվանդանոց եւ 22 դպրոց կառուցել, որոնք շատ ավելի հարկավոր են Թուրքիայի ժողովրդին:

*ԲԱԺԻՆԸ ՎԱՐՈՒՄ Է*
*ՌԱՇՏԻԿ ԱՎԱԳՅԱՆԸ*

ԽԱՉԲԱՌ

**Նախորդ համարում տպագրված խաչբառի պատասխանները**

**Ուղղահայաց**

1. Վանիլ: 2. Նեման: 3. Լեյկոցիտ: 4. Մանրէ: 5. Կիտոն: 7. Կարաղ: 8. Կոզեն: 9. Պրադո: 10. Լենոն: 15. ԱՍԱԼԱ: 16. Արաֆ: 17. Անաբա: 18. «Նորմա»: 20. Սեւանա: 21. Աղանա: 24. Կալիգուլա: 25. Ֆրանկ: 26. Տանին: 28. Ջանան: 29. Նարին: 30. Սուրահ: 31. Սմբակ: 32. Մասնե: 33. Նուրեկ:

**Հորիզոնական**

1. Վարան: 4. Մահակ: 6. Երեխա: 7. Կոնակ: 9. Պրոկլ: 11. Արկար: 12. Լոգան: 13. Էրատո: 14. Պալաս: 17. Ափիոն: 19. Ոսան: 22. Բահամյան: 23. Հրադար: 25. «Ֆաուստ»: 27. Անապա: 28. Ջահան: 30. Սինուս: 32. «Մանոն»: 34. Մագմա: 35. Կարին: 36. Ներոն: 37. Առլեն: 38. Հասակ: 39. Երեւակ:



**Ուղղահայաց**

1. Բնական ամինաթթու: 2. Մարդկոյի մայրաքաղաքը: 3. Չինաստանին պատկանող կղզի: 4. Եթե բացասական կա, կա նաեւ ...: 5. Որբ երեխաների հանգրվան Երեւանում: 6. Նա եղել է Երեւանի քաղաքագլուխը: 9. «Խաղաղ Դոնի» գլխավոր հերոսի անունը: 13. Ռուսական զրահանավ: 14. Շերտավոր սիլիկատների ենթադասի հանքանյութ: 16. Ամերիկյան ավտոմատ միջմոլորակային կայանների ընտանիք: 17. Բարձրագույն ճարտային կարբոնաթթուների խառնուրդ: 22. Ս. Նալբանդյանի ախտորավայրը: 23. Նա հերոսացավ Բաբ-Աղարանում: 25. Սփյուռքահայ գրող, հիմնադրել է «Նոր գիր» գրական հանդեսը: 28. Էշի քուռակը: 29. Ծուղակ, որոգայթ: 30. Տիեզերագնաց շունը: 32. Հաջիբեկովի օպերան՝ «... եւ Մեջնուն»:

**Հորիզոնական**

7. Հայազգի հայտնի տնտեսագետ: 8. Այս օպերան Դարգոմիժսկու մտքի արգասիքն է: 10. Կենտրոնական փողոց Մոսկվայում: 11. Խոր անդունդ, ...: 12. Հայ խմբավար: 15. Ցիտրուսային պտուղ: 18. Մայրաքաղաք Արեւելքում: 19. Պրոկոֆեւի բալետը: 20. Հայաստանցի շախմատիստ: 21. Մրգատու ծառ: 24. Արյան մակարդումը կանխող նյութ: 26. Միջնադարյան Հայաստանում գործածվող լարային կսմիթավոր նվագարան: 27. Սատաղազգիների ընտանիքի մշտադալար բույսերի ցեղ: 31. Ռուս բանաստեղծ: 33. «Բոռ» վեպի հերոսներից: 34. Այս բառը հետո դառնում է անցյալ: 35. Անտպասելի, անհույս: 36. Հայազգի աշխարհահռչակ կինոռեժիսոր:

*Կազմեց Է. ԱՎԵՏԻՍՅԱՆԸ*

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

# Ըստ Սիարո Ռոդեսի, ադրբեջանցիները վախենում են ազատ խոսել

ԲԱԿՈՒ, 31 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Մարդու իրավունքների Հելսինկյան համաժողովի գործադիր տնօրեն Սիարոն Ռոդեսը երեքշաբթի Բաքվի Մամուլի ակումբում կազմակերպված ասուլիսում հայտարարել է, որ իր այցի հիմնական նպատակն է պարզել Ադրբեջանի հասարակայնության դիրքորոշումը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման շուրջ եւ երկրում մարդու իրավունքների պաշտպանության առնչվող հարցերում: Նա նշել է, որ ադրբեջանցի ժողովուրդը խուսափում է ազատորեն արտահայտել իր տեսակետները նշված հարցի շուրջ: «Այնքիսի տպավորություն է ստեղծվում, թե մարդիկ վախենում են ազատ խոսել»,- նշել է նա: Ըստ Ռոդեսի, թե՛ Հայաստանը եւ թե՛ Ադրբեջանը պետք է նախ եւ առաջ բարեփոխումներ իրականացնեն երկրում գործող օրենքներում, ինչը կդյուրացնի նրանց ինտեգրացումը Եվրոպային: Ռոդեսը նաեւ այցելել է Ջեյրանբաթանում գտնվող փախստականների ճամբար, ուր փախստականները նշել են, որ իրենք ստիպված են մշտական աշխատանք եւ ոչ թե նպաստներ: Այն հարցին, թե ինչու է պակասել միջազգային կազմակերպությունների մարդասիրական օգնությունը փախստականներին, պարոն Ռոդեսը պատասխանել է, որ այդ օգնության հիմնական մասը հայտնվում է ադրբեջանական ուկաներում: Ըստ ANS գործակալության, մայիսի 31-ին Ռոդեսը հանդիպել է Ադրբեջանի նախագահի հետ: Հանդիպմանը նա վերստին շեշտել է երկրում ՁԼՄ-ների նկատմամբ իրականացվող ճնշումների իրողությունը: Նա նաեւ ասել է, թե Ադրբեջանի կառավարությունը անտեղյակ է փախստականների խնդիրներից: Սակայն իր հերթին հայտարարել է, որ միջազգային հանրությունը անարդարացի է վերաբերվում Ադրբեջանին:

# «Ռուսաստանն արդարացի պատերազմ է մղում Չեչնիայում»

## *Ռուս գրող Ակսյոնովի հոդվածը «Վաշինգտոն փոստում»*

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 31 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Ռուս գրող Վասիլի Ակսյոնովը «Վաշինգտոն փոստում» հրապարակված իր հոդվածում գրում է, որ «արեւմտյան ՁԼՄ-ները Ռուսաստանը ներկայացնում են որպես կատաղած բթամիտների, խաղաղության ոխերիմ թշնամիների երկիր: Արեւմտյան կիսագնդում ոչ մեկի մտքով չի անցնում, որ Ռուսաստանն ինքն է ազատվել իր ամբողջատիրությունից ի տարբերություն այն երկրների, որոնց ռմբակոծումներով մոխրակույտերի վերածեցին նրանց ազատական հասարակություն վերադարձնելու նպատակով»: «Ազատություն» ռադիոկայանի հաղորդմամբ, դրա գլխավոր պատճառը հեղինակը համարում է չեչենական երկրորդ իր կարծիքով, արդարացի պատերազմը, որը Արեւմուտքում կողմնակալ կերպով է լուսաբանվում: Ըստ Ակսյոնովի, նույնիսկ սառը պատերազմի ամենամռայլ տարիներին Խորհրդային Միությունն Արեւմուտքում իր կողմնակիցներն ուներ: «ԱՄՆ-ի կարծիքով, հաղթանակը Չեչնիայում կհանգեցնի Ռուսաստանում ռազմական բռնապետության հաստատմանը եւ նոր սպառնալիք կստեղծվի ՆԱՏՕ-ի երկրների համար, սակայն արդյոք որեւէ մեկը մտածել է, որ Ռուսաստանի մասնատումը կդառնա սոսկալի սպառնալիք եվրոպական կայունության համար: Ինչո՞ւ ցեղասպանության մասին խոսելիս արեւմտյան ՁԼՄ-ները չեն հիշատակում Չեչնիայի եւ Հյուսիսային Կովկասի մի քանի միլիոն սլավոնների դեմ իրագործված գազանությունները, որոնց Ռուսաստանը չի կարող թողնել առանց էթնիկական զտումների ողորմածությանը»,- գրում է Ակսյոնովը: «Պետք է վերջ տալ ստերեոտիպներին եւ նախապաշարմունքներին, քանի դեռ չի մարել Ռուսաստանի եւ Արեւմուտքի բաց երկխոսության վերջին հույսը եւ քանի դեռ չի սկսվել փոխադարձ թշնամանքի նոր փուլը», եզրակացնում է Ակսյոնովը:


ԵՐԵՎԱՆԻ ԲԱՂԱԲԱՊԵՏԱՐԱՆԻ ՀՐ. ՂԱՓԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Հունիսի 3-ին, 4-ին, 15-ին, 23-ին

ՆՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

ԳՈՒՐԳԵՆ ԽԱՆՋՅԱՆ «Բարեւ սիրկաներ» («Բոլերո»)
(Պիես 2 գործողությամբ)

Տոմսերը վաճառվում են թատրոնի տոմսարկղում:

Ներկայացման սկիզբը՝ ժ. 18-ին:

ԹԱՏՐՈՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ
ՀՀ ՍՐՎԵՍՏԻ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԳՈՐԾԻՉ ՍՐՄԵՆ ԽԱՆԴԻԿՅԱՆ



ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

MEDECINS SANS FRONTIERES

«Բժիշկներ առանց սահմանների-Բելգիա» ոչ կառավարական կազմակերպությունը փնտրում է ջրամատակարարման երկու տեխնիկ, Լեռնային Ղարաբաղում ջրամատակարարման եւ հիգիենայի աշխատանքները վերսկսելու համար:

Պարտականությունները
- Իրականացնել ամենօրյա խիստ տեխնիկական հսկողություն տեղամասերում
- Տեղեկացնել ԲԱՄ-ի ինժեներին աշխատանքների ընթացքի եւ փոփոխությունների մասին
- Լրացնել տեխնիկական վերահսկողության մատյանը
- Ինժեներին ներկայացնել ամենօրյա մանրամասն հաշվետվություն կատարված աշխատանքների մասին
- Տեղեկացնել ինժեներին նախագծի եւ շինարարական աշխատանքների խախտումների մասին

| | |
|---|---|
| Վայրը | Լեռնային Ղարաբաղ |
| Տեւողությունը | 3 ամիս, սկսած հունիսից |
| Պահանջվում է | |
| Հմտություններ | Տային օգնականների կամ շինարարության ոլորտի մասնագետ |
| Փորձ | Ամենաքիչը 15 տարվա փորձ շինարարական ծրագրերում կամ ջրմիջոցների ծրագրերում |
| Լեզու | Հայերեն/ռուսերեն |
| Ընդունակություններ | Խիստ շահագրգռվածություն ներգրավվելու ջրամատակարարման տեխնոլոգիա հաստատությունների մասնակցությամբ: Պատասխանատվության մեծ զգացում ԲԱՄ-ի հանդեպ: Բծախնդրություն եւ սկզբունքայնություն: Ընդունակ լինել օրական 24 ժամ եւ շաբաթական 7 օր մնալ տեղամասում: |

Ինքնակենսագրականների եւ երաշխավորագրերի ընդունման վերջնաժամկետը 2000 թ. հունիսի 5-ն է:
Շահագրգիռ անձինք կարող են ներկայացնել իրենց ինքնակենսագրականները եւ երաշխավորագրերը Լուսինե Անանյանին հետեւյալ հասցեով՝ Հերացու փող. 7, հեռ. 52 54 57, 56 76 69, էլ. փոստ msfb@arminco.com



USAID

AED
Academy for Educational Development

ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունը (USAID) եւ կրթության զարգացման ակադեմիան (AED) տեղեկացնում են

տնտեսական թեմաներով գրող լրագրողներին, որ AED-ի «Անցման շրջանի տնտեսությունների հիմնախնդիրները» զեկուցումների շարքի հերթական հանդիպումը տեղի կունենա հունիսի 2-ին, ժամը 11:30-ին, Թեքեյան կենտրոնում (Խանջյան 50):

Հանդիպմանը կմասնակցեն

ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի խորհրդական
**Հարություն Մեսրոպյանը**
եւ
Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան ՓԲԸ գործադիր տնօրեն
**Գայ Հարվի-Սամյուելը:**

*Թեմա՝ «Բանկային բարեփոխումների ծրագիր. Կենտրոնական բանկի եւ առեւտրային բանկերի դերը»:*



ARMENTEL

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Արմենտելը հայտարարում է ներքին աուդիտորի օգնականի թափուր աշխատատեղի մրցույթ:
Հավակնորդների ներկայացվող պահանջներն են.
- բարձրագույն կրթություն ֆինանսների, հաշվապահական հաշվառման կամ տնտեսագիտական
- աշխատանքի փորձ որեւէ աուդիտորական ընկերությունում
- գերազանց տիրապետում հաշվապահական հաշվառման ստանդարտներին (ՀՀՍ) եւ միջազգային հաշվապահական ստանդարտներին (ՄՀՍ)
- անգլերեն, հայերեն, ռուսերեն լեզուների կատարյալ տիրապետում
- համակարգչային գիտելիքներ

Առավելությունը տրվում է աուդիտի վկայագիր ունեցողներին:
Ցանկացողները մինչեւ 2000 թ. հունիսի 10-ը կարող են դիմել Արմենտելի կադրերի ղեկավարման վարչություն (Երեւան, Սիարոնյան 2, հեռ. 28 23 22): Անհրաժեշտ է ներկայացնել համառոտ կենսագրական տվյալներ, կրթության վերաբերյալ փաստաթուղթ եւ այլ վկայագիր:

ՍՐՄԵՆՏԵԼ ՀՋ ՀԱՍՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՇՈՒԹՅՈՒՆ



**Hotel Armenia**
**Sales & Marketing Supervisor**

We are looking for Sales & Marketing Supervisor for Hotel Armenia.

Excellent knowledge of English, computer skills, Word and Excel is a must. Good interpersonal and sales skills are necessary. Accounting skills are preferable. Previous extensive sales & marketing experience is an advantage.

Apply in writing with full CV by June 6, 2000, Hotel Armenia, Amiryan 1, Yerevan, Armenia, Department of Human Resources.

**Tel: 560391**



**Hotel Armenia**
**Training Manager**

We are looking for Training Manager for Hotel Armenia.

University degree, excellent knowledge of English and Armenian, good working knowledge of computers' applications (MS Windows, MS Office). Excellent communication skills and ability to work with people. Previous experience would be an advantage. Additional training will be provided.

Apply in writing with full CV by June 6, 2000, Hotel Armenia, Amiryan 1, Yerevan, Armenia, Department of Human Resources.

**Tel: 560391**


# ՀԵՌՈՒՏԱՍԱՏԱՐԱԳԻՐ

## 1 հունիս

9.00 Հայլուր
9.20 Հեռուստասերիալ «Սուրճ կնոջ բուրմունքով»
10.10 Մանրամասներ
10.20 Մամուլի կրոկ
10.30 Հայորդաց տներ
11.05 Ազդարար
11.30 «Կենդանի տիկնիկ»
13.00 Հայլուր
13.20 Ռուբիկոն+
17.00 Հայլուր
17.20 Իրավունք
17.45 Փաստագրական կինոնկար «Մրցույթ»
18.00 Հեռուստասերիալ «Սուրճ կնոջ բուրմունքով»
19.01 լուր
19.10 «Խոշոր շահում»
(Նույն ժամին արբանյակային հեռարձակմամբ)
19.10 Կեսգիշերային ճեպընթաց)
19.50 Հաստիկ Հացագործյան
20.25 Արտակարգ ալիք
20.35 Տուն տունիկ
21.00 Հայլուր
21.40 Հեռուստակասալոգ
21.50 Պրեմիերա
22.00 «Բարի ակնթարթ»
22.50 Հեռուստամարաթոնի էջերից
23.10 Հիթ շերթ
23.40 Հայլուր
00.00 Կեսգիշերային ճեպընթաց
01.00 Ռուբիկոն+

### ՊՐՈՄԵԹԵՎՍ

9.00 «Բարի լույս, Հայաստան»
10.10 «Ամեն ինչ հանուն քո սիրո»
18.00 Մուլտֆիլմ
18.10 Մանկական ժամ. սերիալ «Նինձյա կրիաները», սերիալ «Քոնան»
19.00 «Ամեն ինչ հանուն քո սիրո»
20.00 Լուրեր
20.35 Ռ. Մավիսակալյանի հեղինակային ծրագիրը. «Հարցեր»
21.20 Օրը
22.25 «1-02» լրատու
22.35 «Բոլոր մարդիկ մի ժամանակ...»
23.00 «Ջեղնահարկ»
23.25 Գ/Ֆ «Ջազում միայն աղջիկներ են»

9.00 Տոմար
19.05 Չղջիկ
19.30, 21.30 Սուրհանդակ
20.00 Մամուլի խոսնակ
20.10 Ի դեմ
20.30 Սարդարեգ
21.10 Հրադարակ
22.05 Գ/Ֆ «Ծանոթացեք Ուոլի Սփարքսի հետ»
00.35 Ակնթարթ
00.40 Գ/Ֆ «Դժոխքում»
(Վերջին Սուրհանդակ)

7.00 Բարի առավոտ
10.00 Նորություններ
10.15 Գ/Ֆ «Կար-չկար մի լարող կար»
16.00 Նորություններ
16.15 Վիկտորինա երեխաների համար
16.35 «100 տոկոս» ծրագիրը
17.00 ... Մինչեւ 16 եւ բարձր
17.35 Սերիալ «Տատասյանի ուղիներով»
19.00 Նորություններ
19.30 «Կալամբուր»
20.00 Գործընթաց
20.45 Սերիալ «Քնքուշ թույն»
21.45 Բարի գիշեր, երեխաներ
22.00 Ժամանակ
23.00 Գ/Ֆ «Կին ամենի համար» (դերերում Լ. Ուդովիչենկոն, Ն. Կարալենցովը, 1991 թ.)
00.40 «Մոլորությունների ժողովածու»
01.10 Նորություններ
01.25 Գ/Ֆ «Ուր են իմ երեխաները» (դերերում Ս. Հելենբերգը, Կ. Բերնսեն, Ք. Հոթ, ԱՄՆ)

7.00, 8.00, 9.00, 10.00 Լուրեր
7.20, 7.50, 8.50, 9.45 Բարի լույս, Ռուսաստան
7.35, 9.35 Ընտանեկան նորություններ
8.30 ՊՏՊ-ի փոստը
9.20 Հերթապահ բաժանմունք
10.40 «Արենա-սպորտ»
11.20 Սերիալ «Գնչուհին»
12.10 Սերիալ «Սանտա Բարբարա»
13.00 Հեռուստատեսային ՀՍՍ
13.25 Իմ XX դարը
14.00, 18.00, 21.00, 00.00 Լուրեր
14.30 «Կանանց խաղաթուղթ»
15.05 Սերիալ «Սեւ մարգարիտ»
15.50 Սերիալ «Հարուստներն ու նեղանվորները»
16.45 Նոր «Հին բնակարան»
17.40 Սուլտծրագիր
18.30 Աշխարհ
18.55 Երկխոսություններ ծկնորսության մասին
19.25 Սերիալ «Փախստական միանձնուհին»
20.25 «Սոֆիտակ թուրակ» ակումբ
21.40 Սերիալ «Վայրի հրեշակը»
22.35 Սերիալ «Կեղտոտ պարեր»
00.30 Մեր գործը. «Սեւ խավիար»
01.30 Կինոյի ժամ. Կարդինալ Ռնյուլը եւ Դանիել Դարյեն «Հանցագործության վայրը» դետեկտիվում (Ֆրանսիա)
03.05 Հերթապահ բաժանմունք


@rminco Global Telecommunications

ԻՆՏԵՐՆԵՏ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ «ԻՆՏԵՐՆԵՏ» ԱՐՁԱՐԱՆՈՒՄ: Խանջյան 50: Հեռ. 575823:


«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արշակունեաց 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69150. Պատուեր 1266 Տպաքանակը՝ 4000 Ստորագրված է տպագրության՝ 31. 05. 2000 Գինը՝ 100 դրամ